

ՄԻԱՄԻՍ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՏՈՐԼԵՆ-ԽԱՐԱԳԻՐ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ



ՏԵՐԴ. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

Բ. ՏԱՐԻ ԹԻԻ 17

15 ՄԱՐՏ 1908

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Ի Ի Ն Ը

Անպէս Մսմսուֆ

Սիրսին Տեսլականը—Սէր

Ֆրանսացի Հայագէտի մը Նամակը «Մասիս»ի

«Մասիս»ի 20 Ոսկի Պարգեւին Արդիւնքը

Մարապէսները

Նաղաւ Յովնաթանի Դիմերգութիւնները

Տօք. Յակոբ Թօփնեան

Հովանազ

Մոլորումի Պաներ

[Էջ մը Բօլ Ռուժէի Au Fond du Cœurէն]

Սիրոյ Բնագանցութիւնը

ԶԱՐԵՂ ՆԵՄՅԷ

Հայ Բռնամերու Լեզուն

Քրոնիկ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ԳԻՍԱԿ

ԲՕԼ Տ'ԱՌՆՈՒ

ԽՄԲ.

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

ԹԼԿԱՏԻՆՅՆ

ՄԱՆՆԻԿ Ռ. Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Ն. ԵԱԶԸՃԵԱՆ

ԱՐԹՈՐ ԵՕԲԷՆՀԱՈՒԷՐ-Ի

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. ՃԻՀԱՆ

1908

ՀԵՂԻՆԱԿՆԵՐՈՒՆ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐՈՒՆ

Հեղինակներէ և հրատարակիչներէ անոնք՝ որ կը բաղձան Մասիսի մէջ ծանուցութիւն իրենց հրատարակութեան, պէտք չէ մոռնան մեր պայմանը թէ, 2 օրինակ զրկուած զիրքերը միայն նկատողութեան կ'առնուին և կը ծանուցուին :

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԹԵՐԹ ազգային գրական և ֆաղստական .—Բա-
րանորդադրութիւն Կ. Պետոյ համար՝ տարեկան 80, վեցամսեայ 45
դր. : Դաւաններու համար՝ տարեկան 108 դր. : վեցամսեայ 60 դր. :
և օտար երկիրներու համար՝ տարեկան 35 ֆր. : վեցամսեայ 20
ֆր. : Զեռքէ վաճառում՝ քաղաքի փարս : ԱՐԵՒԵԼՔ հրատարակ
կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ, ըն-
տիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով :
ԱՐԵՒԵԼՔ, իր վերակալմամբ խմբագրութեամբ և իր կարող աշխա-
տակիցներով առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին
մէջ, արժանաշատ՝ ընթերցողներու գնահատմանը : Իր առաւելութիւններէն
մէկն է ՊԱՏԿԵՐԱԶՈՐԻ ԸԼԼՈՒՄ հանգամանքը, որով իր ընթերցողնե-
րուն կը ներկայացնէ պարբերաբար Ծանօթ Ինքնաբեր և երբեմն ալ տե-
սարաններ : Ոչնուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուած-
ները, եկեղեցական, կրօնական, անտեսական-սեղանաւորական, եր-
կրագործական, իրաւարանական և այլն, բացի գրական, բանասիրա-
կան գրուածքներէ, օրուան տեսութիւններէ ևն : ԱՐԵՒԵԼՔ վերաբերեալ
ամէն գրութիւն և բաժանորդագիրն ուղղել Տէր և Տնօրէն Գաղեգին
էֆ. Պոյաճեանի հասցէին, Ղաթաթիա, Մանուկտիէ Ճառտէսի, ուր
գտնուին թերթին Տպարանը և մագաղարատունը :



Je prends tous les jours

de la vraie **CREME DE MORUE**

de la Ph^{ie} PEQUART de VERDUN-s/-Meuse

C'est très bon !!!

Petite mère, se méfie des produits
similaires : mauvais et digérant mal.

Le Flacon : 3^{fr} 50 dans les Pharmies.

SUPERIEURE à L'HUILE de FOIE de MORUE et aux EMULSIONS.

Նշանաւոր Տոքթ. Բէքաուր
այս էմուլսիօնը կը դերա-
զանցէ հրատարակի վրայ
գտնուած բոլոր իր նմաննե-
րը : Զուգի իւզի տեղ կը գոր-
ծածուի և անկէ աւելի
օգուտ ջանի աղոց և տկար

անձերու : Միակ ներկայացուցիչ Թուրքիոյ . Ո. Սօլախեա , Կ. Պոլիս

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԴԻՏԱԿԱՆ ԱՄԵՆԱՎԵՐՋԻՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ կը դարձանէ ամէն տե-
սակ աղւալի և լինալ հիւանդութիւնները, փաճ աղւանները կը լեցնէ՝
առողջ աղւաններու պէս երկար տանն գործածուելու պայմանով :

ԲՈՂՈՐՈՎԻՆ ՆՈՐ ՄԵԹՈՏՈՎ, նուրբ, հաշակաւոր և շիւղեղեղ
արուեստական աղւաններ կը պատրաստէ : Զնականին ճիշդ նման :

Հիւանդ կ'ընդունի ամէն օր իր դարմանատան մէջ, Բերս, Մեծ
Բարձաք-Գաբու, Թիւ 8 : Կարօտ հիւանդները ճրի կը դարմանէ հինգ-
շաբթի օրերը՝ Բերալ Աղքատախնամ դարմանատունին մէջ :

Կիրակի օրերը ժամայրութեամբ կ'ընդունի :

Ժ. ՍԻՄՕՆ.

Բարիզ



Ք Ր Է Մ

Ս Ի Մ Օ Ն

Կիսերինով պատասխանում
եւ առանց որ եւ է հարգական խղի

Հաւաքոյն արտադրութիւնն է
ան՝ պահպանելու համար ԴԷՄ -
ԲԻՆ . ՈՒ ՋԵՌՖԵՐՈՒՆ

Ճերմակութիւնը

1900ին բարիզեան ոսկի շնորհով

Քրեմ Սիմոնը մօրթը կը պահպանէ օդին ազդեցութեան դէմ .
ճաթատուքներուն , կարմրութիւններուն եւ խորշակահարութեան
առաջքը կ'առնէ :

Եթէ վրայէն Սիմոնի քրեմաշոշի թեթեւ խաւ մը քսուի ,
դէմքի գոյնին երկատարդութեան շլացուցիչ փայլ մը կու տայ :
Պէտք է ամէն օր գործածել դայն , թաց լաթով մը մօրթին վրայ
տարածելով եւ յետոյ մեղմ շփումով մը ներս թափանցել տալով :
Ճարպալին ոչ մէկ մարմին չպարունակելով , ամբողջովին կը
լուծուի ջուրին մէջ :

ՄԻՍԿՆ Է ԱՆ ՈՐ ԸՆԴՈՒՆՈՒՄԵ ԸՆԼԱՅ ԸՈՒՈՐ ԳԵՂԱՆԻ ԳԵՐԱՍԱՆՈՒՀԻ-
ՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ :

1860ին հնարուած , խկապէս առողջապահ , կ'ու ամենատաաջ-
նակարդ Քրեմնն է աւն աղոյրութեան : Բովանդակ աշխարհի մէջ
իր ունեցած յաջողութիւնը առաջ լերած է լազմաթիւ կեղծեր ,
որոնցմէ պէտք է խորշիլ ու խոյս տալ :

Քրեմ Սիմոնը , քրեմաշոշի Սիմոնը եւ Սիմոնի
օճառը կը դաժնուին զեղարաններուն , անուշահոտու-
թեան վաճառատուններու եւ պագարներու մէջ :



Գնած սեւն պէտք է լաւ քննել վաճառանքի՝ որ պէտք է ըլլայ
ովի պակեթին նիւթ նմանը :



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱՔԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ և ԲԱՂԱՔԱԿԱՆ

Տ Ն Օ Ր Է Ն - Խ Մ Բ Ա Գ Ի Ր

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

56րդ. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ Բ. ՏԱՐԻ ԹԻԻ 17

15 ՄԱՐՏ 1908

ԱՆՊԷՏ ՄՏՄՏՈՒՔ

Կտակները նորաձևութեան կը նմանին . ճաշակը իր անողորք զնա-
հատումը ունի զանոնք դատող : Բարիքի մը գաղափարականութիւնը յափշ-
տակուած միտքը՝ որ կ'ուզէ իր կեանքը կնքել անուշը յաւերժացնող
հրիտակով մը՝ անկաշկանդ է իր յղացումին և մտածելու կերպին մէջ :
Բայց, ողջ մնացողներէն ա'ն ալ՝ որ հանդիսատեսն է մէջտեղ նետուած
բարեգործական ծրագիրին՝ նոյնչափ անկաշկանդ ու աղատ է՝ դատելու
համար իր ուշադրութեան հանդիպող բարեգործութիւնը :

Այսպէսով է որ՝ Տօքթ. Վարդազարեանի այս օրերս մէջտեղ նետած
կտակը՝ կ'ընդհարուի ընդդիմութեանը մեր դատաստանին , Յնձախանդ
հրճուանքով ու զմայլահար յափշտակութեան ուխտանալերով կը հռչակեն
ու կ'աւետեն մեր թերթերը թէ՝ Տօքթէօնը^[1] եղական մեծանշանութիւնը
և չքնաղ , խնկելի մտածումն է ունեցեր 2000 ոսկիի գումար մը կտա-
կելու , անոր տոկոսովը—ո՛վ երանելի մտատանջութիւն և հաճոյք—որք
ու աղքատ աղջիկներ ամուսնացնելու համար : Կը տարփողեն ու կը կե-
նան , չորս հովերուն կը ցանցեն այս աւետիւնը՝ թերթեր , իրե'նք ալ
մասնակից ըլլալով այն հաճոյքին՝ որ Տօքթէօնին ունեցած չունեցած

[1] Տօքթէօն Վարդազարեան էֆ. բաժանորդ է մեզի, կանոնաւոր վճարող :

բոլոր խաչաչին է կազմեր : Բայց կը խորհուր՝ թէ ի՞նչ է օգուտը , անմիջական կարիւրութիւնը այդ ո՛րչափ զմայլանքով հաշակուած բարեգործութեան : — Ո՛ր եւ է թափթփած ազջիկ մը , ժողատուհի կտոր մը կամ սպասուհիութեւ մը՝ պիտի կարգեն անգործ մարդուկի մը հետ, պատճառ եղած ըլլալով որ՝ անոնք աճին ու բազմանան , եւ մարդկային թշուառութիւններուն ու «զէրզէպիլ»ութիւններուն վրայ մէկ քանի հատ ալ աւելցնեն :

Տիրացուութիւնը մեր ժողովուրդին յատկանիշն է : Ի՞նչ «մէռաք»՝ ազջիկ կարգելու սա մտածումը :

Այդ մարդոց չկարգուելովը ի՞նչ պիտի ըլլար : Թող անոնք ալ պակաս մնային հիմնական հաճոյքին վայելքէն : Ի՞նչ փութկոտութիւն է սա ազջիկները անպատճառ ամուսնական կեանքին մէջը խոթելու : Անհասկնալի է թէ՛ ազջկան մը մինակը մնալէն ի՞նչ կ'ըլլայ որ՝ շատեր անհանգիստ կը զգան ինքզինքնին եւ կը վրդովուն գաղափարով՝ զայն մանչու մը զօգելու , հեռուէն հեշտագին խայտանք մը , դրդիւ մը , խաղաղութեւ մը զգալով ագիւէ ծնելիք վայելքէն : Բոլոր ըլլալիքը ան է որ՝ քանի մը լակոտներ ալ մէջակց կ'ըլլեն այդ տեսակ վնթի ծնողքներէ եւ աշխարհը սղոզեն եղածներուն վրայ նոր բեռով մը :

Քիթիներու տակը , գպրոցները կը հեծն ամէն տեսակ խեղճութիւններով , վախ , անարիւն , վատութ , գալկադէմ ու գեղնած տղաք՝ անանուգ կը տուայտին , սերցնող կ'ալլասերի Ֆիզիքսպէս՝ չքաւորութեան , խեղճութեան երեսէն , կրթական գործը կազմ կրկնայի մը պէս կը տապալակի , եղած տեղը մնալով , հեռուն , զանազան մասնադիտութիւններու նուիրում եւ ապուէնի մը կարօտ խոստմնայից աղքատ ու սանուցներ՝ անթոթութենէ կը ստակին , եւ հոս՝ կտակ կը սարքեն . . . ազջիկ կարգելու համար : Ի՞նչ ճաշակ :

Ապահովաբար 2000 ոսկիի մը տոկոսը՝ տարին մէկ ազջիկ մը հարանադնելէ աւելիին չպիտի կրնայ զօրել : Եւ , ոգորմութիւնով , նպատակով կարգուելու յոգալող ազջիկ մըն ալ՝ աղնուաղարմ օրիորդ մը չպիտի ըլլայ երբեք , այլ ո՛ր եւ է չլիտի , ճենճոտ ազջիկ մը՝ որ էրիկ առնելու , մանչու մը գլխուն փաթթուելու խպլիկ հռանգով՝ պիտի զիջանի իրեն կարկառուած դրամով դէմը հանուսդ պարսնի մը գոգը փութալու ստորնութեան : Ի՞նչ կ'ըլլայ ասկէ : Ատանկ ոգորմիկ ազջնակի մը չկարգուելովը ի՞նչ կ'ըլլայ , որ մեծ փութկոտութեան մըն են ինչկեր՝ կտակներ սարքելու , հարս-վեսայ չլինելու :

Աւելի ապահովութիւն կայ :

Ամուսնազուարճ այս կտակին հսկողութեանը կոչուած են՝ Ս. Պատրիարքին , Գաբրիէլ Նորատունկեան , Տիգրան Թօքաթեան եւ Տօքթ. Սեդրակեան Լիւթնոթիւրու պէս բազմադրուած անձնաւորութիւններ : Անոնք՝ տարին անգամ մը , իրենց բան-գործ պիտի ընեն զրազլի այս

գործով, յանձնաժողովներ պիտի կազմեն, որոնք քննութիւններ պիտի ընեն ընտրելիի մը համար, աղմուկ, իրարանցում, վիճաբանութիւն, կողմնակցութիւն, զիմում, մերժում, — և ապահովարար լրագրութիւնն ալ զերծ չպիտի ըլլայ ասոնց տրձագանդէն, — ի՞նչ է, աղջիկ մը պիտի կարգուի կտակարարի մը խնրուն : Կը զգա՞ք բոլոր զաւեշտականութիւնը գործին : Չհասկցուիր թէ՛ հանրային ի՞նչ տեսակ օգտախնդրութեան մը ձգտումը կրնայ արդարացնել այս հիմնովին նորանշան յղացումը կտակի : Յետոյ, ո՞վ կ'ապահովէ որ՝ ընտանեկան երջանիկ բոյն մը պատրաստելու սակաւապէտ ու աւժիօրէն խեղճուկ երազով ծրագրուած այս կտակը յսփի արդիւնքներով չպիտի պակուի, երբ որ և է դատարկաչիլի մոռանացու մը՝ զրամին սիրուն՝ ճակատագրիւր միացնէ աղջկան մը՝ զոր կրնայ գժրազգութիւններէ գժրազգութիւններու գլորել, անհամերաշխութեան մը պարագային : Եւ խնձր ծագած պիտի ըլլայ այդ աղջիկ կարգելէն :

Վատհօրէն, ծիծաղելի gaffe մը, ցնդած յղացում մըն է՝ աղջիկ կարգելու այս կտակը՝ որուն աղնիւ բարեւէր մը ուզեր է զոհել 2000 սակիի դումար մը :

Պիտի ըսեն ինծի որ՝ ո՞վ ինչ կը խառնուի տրիշի մը ճաշակին, զգացումին և նախասիրութեանը : Կտակարար մը ազատ է, իր դրամ մը ուղած կերպովը և հաւնած ձեռովը տրամադրելու ո՞ր և է բարեգործութեան : Ծիշդ է : Մարդ ուրիշին գործին չի կրնար խառնուիլ չափ, մանաւանդ կտակի պէս գործի մը՝ ուր հեղինակին ճաշակը, նախասիրութիւնը մեծ դեր ունին : Բայց, իրաւունք չի՞ տրուիր, միւս կողմէ ալ, հանրութեան կամ գրողին, որ ազատ զգայ ինքզինքը, իր դատաստանին մէջ, երբ մանաւանդ ականատես է գործի մը՝ ուր լուրջ դատողութիւնը, խոհական հեռատեսութիւնը և օգտախնդրութեան հանրային լայն հայեացքը հիմնովին տեղ չունին :

Երբ բարեգործելու ա՛յնչափ աղնիւ գետիններ՝ անդին տառել կը մնան, հեռատես սերմանողներու պակասէն, երբ կրթական ու դատարակչական ա՛յնչափ լայն կարօտութիւններ լքուած կը պահուին, ելլել աղջիկ կարգելու ետեւէ ըլլալ և այդ միջոցի իտէալին համար կտակ սահմանել՝ ա՛յն տեսակ արարք մըն է, — չըսելու համար անբացուական մտածում մը, — որուն առջեւ կարելի չէ՛ զսպել կուշտ զարմանք մը, և լսելի չընել սրտնեղութեան, բողոքի ձայն մը :

Ագիկ տարբեր մտածում մը չէ՛ որ կրնայ զրգած ըլլալ զիս այս սողերուն : Եւ «տնպէտ մտմտութեան» մը հանդիսատեսութեան ցաւովն է որ, կը փորձուիմ խօսիլ հոս :


Քիչ մը մերկացու՛մ սա տիրացուական դադափայրներէն. կը բաւէ՛ եղածը : Եւ չա՛տ ալ է արդէն, չա՛տ :

ՆՆՈՎՆԵ ՅԲՄԷՆ

ՍԻՐՏԻՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ—ՍԷՐ

Մեր անձնական բոլոր լարեմտանութիւններէն ու ձիրքերէն խիստ աւելի գուրգուրանքով պահպանելու ենք ջուխտակ տեսականները, բնածին հարազատ սեփականութիւնները սիրտին և հոգիին — Սէր և Հատաք, որոնցմէ մէկը, Սէրը, է նիւթ առաջիկայ յօգուածին :

Երազը ուղնիւ և մաքուր սէրին, երազն է անոր, որուն սիրտը ապականութիւն չի տեսներ : Սիրտ մը որ սէր չունի, կը նմանի երկինքի մը՝ որ արեւ չունի : Սիրտ մը տաճար մըն է սրբազան, եթէ սիրոյ մը



ԳԻՍՍԷ [Ս. ՊԵՏԻԿԵՍՆԷ]

ամէն մարդու և Աստուծոյ : Սիրտին մէջ ծլած վարդն է ան, զոր ո՛չ ոք կը մերժէ : Ո՛չ մէկ բանի համար կրնաս ըսել՝ «Ունիմ», բայց միայն սիրոյդ համար, մինակ ան է քուկդ : Այս ճշմարտութիւնը որչա՛փ խորունկէն զգացեր էր բանաստեղծը, երբ իր ազու քնարին վրայ երգեց՝

սրբութիւնը կը պահէ իր
մէջ : Ան՝ Սէրը՝ իր կեան-
քին խորանին լուսատու
կանթեղն է. անչէջ պահէ
դայն . եթէ մարի սէրը,
սիրտը կը մեռնի : Ան որ սէր
չունի՝ սիրտ չունի . վա՛յ
անսիրտ էակին : Եթէ
զուրկ ևս սիրոյ, տեսա-
կանէն, ուրեմն դուեր կը
բնակին քու ներսիդիդ .
փախի՛ր, դուն քեզմէ
փախի՛ր, եթէ կարելի է :
Ճշմարիտ սէրը լիերէն է՝
երկինքէն — «Աստուած
սէր է» : Սէրը կը մաքրէ
սիրտին ժանդերը . կեան-
քի անդունդին վրայ առ-
տուան լոյսը կը ծագէ :
Սէրը կը սրբացնէ մար-
դը : Անտէր մարդը՝ ան-
աղնիւ մարդն է : Միայն
սէրը կայ ճշմարիտ, ան-
կեղծ, թանկագին նուէր,
զոր կրնաս մատուցանել

—«Երկինքը իր լուսաւորները ունի, — Ծովը իր մարգարիտները, — Այլ իմ սիրտս իր սէրը ունի» : Օ՛հ, խնամեցէ՛ք զայն, սակայն, որովհետեւ սէրը աչքին լոյսին պէս է, որ շուտով կընայ միասուիլ . փափուկ է շուշանի պէս, դիւրաւ կը թօշնի : Պաշտպանեցէ՛ք զայն, որովհետեւ անոր կողոպտիչները շատ են և խորագէտ :

Աւա՛ղ, որ հասարակ փորձութիւն մըն է դարձեր սրբազան սէրը, այս փառաւոր տեսլականը մարդուն, նուաստացնել, աղտելել, չփոթել լով կամ փոխանակելով զայն անարժէք, ծանծաղ, հիւանդ ու յիմար քնազդի մը հետ, կը նուաստանայ սիրոյ թափանցիկ, ճերմակ քողը : Պղծող, կրծող զգացումն է ան սիրտին, որչափ որդն է մատաղ տունկին : Ապականուած միջավայրի մէջ ապականուած գրականութիւնով անմտղ երիտասարդներ պակաս չեն, դժբաղդաւոր, որոնց համար սիրոյ տեսլականը գուհեկացած, տափակցած, անասնականացած, լսիրչ, վատառողջ քնազդի մը փոխարկուած է և որոնք չեն հաւատար իսկ թէ վճիռ, բարձր, աղնիւ ու աղնուայուցիչ սէրը երբեք դոյութիւն ունի այսօր : Մասկեր անասուններ են անոնք . գիշակեր արծիւներ, որոնք դիակներու վրայ կը կերակրուին, գէշեր, կորսուած արայածներ, որոնք անտեղեակ, անփորձ են այն շողարձակ լոյսին, այն երկնային կայծին՝ որ Աստուծոյ կուրծքէն կ'իջնայ մարդուն կուրծքին մէջ և զայն կը գեղեցիկացնէ, կը փայլեցնէ, կը մեծցնէ, կ'անմահացնէ : Անոր մէջ մնայուն երջանկութիւնը պահուած է մարդուն :

Ո՛հ, ո՛հ, տափանքը սէրը չէ, նիւթապաշտներ, ո՛վ նիւթի դաւակներ, որ մարմնականէ վեր՝ անդին ոչինչ կը ճանչնաք, ոչինչ գիտէք : Բանաստեղծութիւնը կը սիրէ՞ք, գիտե՛մ որ կը սիրէք : Կը հաճի՞ք, կը զիջանի՞ք ուրեմն կարգաւ հին հատոր մը, որ կը բովանդակէ կարգ մը սիրուն նամակներ, բանաստեղծ-փրկիստ-փայլի մը գրչագիր թուղթերը, և այս թղթեակներու շարքին մէջ հատ մը պիտի գտնէք զրկուած Կորնթոս, ուր պղծութիւնը սրաշտամունք էր յանուն սիրոյ . հոն, հատուածի մը մէջ, որ համակ քերթութիւն է, գոհար բանաստեղծութիւն մը . հոն, քերթող նամակագիրը սէրը կ'ուրուագրէ, լաւ է ըսել, կը նուագէ : Օ՛հ, կ'աղաչեմ, կարգացէ՛ք, առանց նախապաշարումի կարգացէ՛ք . սէրը երգուած չէ երբեք անոր պէս.—«Սէր երկայնամիտ է, սէր քաղցրանայ... սէր ո՛չ երբեք անկանի» : Աս է սէրը, բայց ո՞ւր կը գտնուի ան, մաքուր սէրը, բայց միայն՝ մաքուր սիրտին մէջ : Երանի՛ անոնց որ սիրտով մաքուր են, որովհետեւ անոնք պիտի տեսնեն Սէրը : Սէրը չայցելեր, տեղ չունի անոնց մէջ, որ թօթափած են պարկեշտութիւնը, մաքրութիւնը, անկեղծութիւնը, հաւատարմութիւնը, ամէն աղնիւ զգացումները իրենց վրայէն, որոնց սիրտը ճամբու պէս եղած է, ամէն հոգի կրնայ կոխել անցնիլ անկէ, հասարակաց սիրտ մը, որ ամէնուն է և ո՛չ մէկուն կը

վերաբերի : Անհատաւոր սիրաւոր ստան , ձրի ծախուած սիրաւոր մըն է , որ
ամէնուն կը ցանկոյ ու ամէնուն կը նուիրուի : Դատարի սիրաւոր , ան-
դունդ է ան , քան սիրաւոր . թո՛ւք տառակ սիրաւոր վրայ , որ դերեզման
մը դարձեր է սիրոյ դերադոյն տեսլականին :

Քանի՞ներ կան , սակայն , ճշմարիտ մարդիկ , որ օրերնին անցու-
ցած , մաղերնին ճերմկուցած են , այլ տակաւին կորսնցուցած
չեն կատարեալ սիրոյ տեսլականը . անոնք այդ տեսլականը կը պա-
հեն անաղարտ , այդ յաւիտենական ժառանգութիւնը կեանքին : Անոնք
դեռ պատրաստ են անկեղծօրէն հաշակել թէ աշխարհիս մէջ մեծագոյնը
բարիքներուն և լուսաւորելը օրհնութիւններուն՝ սէրն է : Ու , թէեւ ,
կորսուած է իրենց մարմնական կորովը , թէեւ պաղած է արիւնին ,
թէեւ թուլցած է արտիւնը կուրծքերնուն , այլ սէրը մը մնայ թարմ ,
կը մնայ տալիք , կը մնայ միշտ երիտասարդ : Եւ օր կու գայ՝ երբ կը
նուազին աչքերը , կը պակսի շունչը , կը կորսուի ամէն զգայութիւն ,
կը մարի ամէն լոյս , այլ կը մնայ ճրագ մը՝ սիրաւոր մէջ — սիրոյ ճրա-
գը , զոր մահը չի կրնար մարել : Սէրը անմահ է , սէրը չի մեռիր ,
ինչպէս երգած է Հայ դրագէտ-բանաստեղծ մը՝ սա զոգարիկ տողերով .
«Անմահ է սէր , ըստ չիյնար—Թէեւ անցնի տիեզերք—Խամրի ծագիկ,
ժշկի դո՛ւար—Մնայ սէր դարէ ի դար» : Բայց տակաւ ճշմարիտ է , իրո-
ղութիւն է ան մարդուն , որ հետեւած է նոյն տեսլականին , հաւատա-
ցած է անոր ու մեղանշած չէ անոր զէմ : Իրականութիւն է աս միայն
անոր , որուն մէջ կոյս սիրաւոր , մաքուր խորան մը ու վարագոյրին
ետեւը սրբութիւններու սրբութիւն մը մնացած է :

Կարգացէ՛ք զարմանալի տապանագիր մը , զոր անգլիացի բանաս-
տեղծ մը կտակեց ու գրել տուաւ իր և կնոջը շիրիմին վրայ . «Amavimus,
amamus , amamibus» . — «Սիրեցինք , կը սիրենք , պիտի սի-
րենք» : Պարոն սիրաբանողներ , ասիկա ձեր խոնարհած «սիրեմ» բայը
չգիտնաք . եթէ բարոյական չափ մը կայ քովերնիդ , չափեցէք այս
փափուկ , անարատ , վսեմ սէրին խորութիւնը կամ ծաւալը , որով ան-
մահ բանաստեղծը իր կեանքը ձեւակերպեց , իր սիրաւոր վարեց օղին մէջ
ճամբորդող արդարին պէս և այն ատեն թերեւ հասկնաք նշանակու-
թիւնը սիրոյ զաղտաբարտականին , որ կեանքը կ'արեւէ , կը լուսաւորէ :
Մհ աս սէրն է որ վախճան չունի , որ միայն չի սիրեր այլ «պիտի սի-
րէ» յաւիտեան : Անա այս սէրն է որ մարդը բանաստեղծ կ'ընէ : Պահէ՛
անձդ մաքուր , փախի՛ր , մի՛ մտիկ ընել անոնց , որոնց հոգին խաւա-
րեր է կեղտոտ խորհուրդներով : Մի՛ հաւատար քարոզութեանը անոնց ,
որոնց միտքը չարացիներ է , միշտեւ , աւա՛ղ , հեգնել սէրը , հայոյնել ,
դժովք կոչել զայն , որովհետեւ իրենց համար մաշող կրակ եղած է
ան—Սէրը : Սուրբ պահէ սէրը , ըսէ . «Սուրբ եղիցի անուն Բո» . ու
ան դրախտին ոսկի դուռը պիտի բաճայ քու զիմացդ՝ հեռու թռչաւոր
օձին սողոսկումներէն :

Ան որ սէրը կ'արճամարէ , ան որ «Աէրը ինչ է» կ'ըսէ , ան որ սիրոյ կատակերգութիւնը կը խաղայ , որուն բառարանին մէջ «սէր» ու «մոլութիւն» հոմանիշ բառեր են , ան որ չի հաւատար սիրոյ սրբութեան , որ չի ճանչնար զայն իւր քաղցրագոյն պարաքը մարդուն ու անգնահատելի պարգեւը երկինքին , ան մարդը հրէշ մըն է քան մարդ , գէթ ինկած մարդն է , փառած , փճացած արարածը , երկրի վրայ : «Անդգամ» է ան , որ իր սիրտին մէջ ըստ . «Չիք սէր» : Ամէնէն խորշելի , կեղծաւոր , ստախոս էակն է ան , որ պղծութիւնը «սէր» անունով կը սրբապղծէ : Անհաւատ , անաստուած ան մարդն է , որ սէրը կ'ուրանայ , որովհետեւ ուր սէր չի կայ , հոն Աստուած չի կայ , որովհետեւ «Աստուած սէր է» : Կ'ուզե՞ս ճանչնալ սէրը , ճշմարիտ , անարատ , մնայուն սէրը , կ'ուզե՞ս ճաշակել սուրբ սէրը . — Մ' , ո՞վ ծարաւի չէ սիրոյ , ո՞վ կրնայ ե ո՞վ իրաւունք ունի խափանել մեր տենչը իրական երջանկութեան , սիրոյ լուրր քաղցրութեան : Մաքուր սիրտ մը մշակինք , ուրեմն , ե սիրոյ հրեշտակը հղաթեւ պիտի թռչի , գայ յաւիտենական բոյնը դնելու հոն , ոսկի սիրտին ոսկի վանդակին մէջ :

Հաւատա՛ սիրոյ տեսլականին , բայց մի հաւատար անոնց , որոնք չեն հաւատար սիրոյ , չեն հաւատար մարդուն : Անոնք միայն կաւը կը ճանչնան , կաւը կը տեսնեն , այլ ո՛չ երբեք ոսկին մարդկային բնութեան , որոնց համար ո՛չ առաքինութիւն կայ , ո՛չ խէչալ , որոնց համար , մինչեւ իսկ , ինքնախաբուծիւն է սիրոյ ե աղնութեան տեսլականը : Մ' , աղէտներ են անոնք հոմայքին , բարոյական համաճարակները մարդկութեան . հեռւ անոնցմէ , որոնց փիլիսոփայութիւնը՝ շնական փիլիսոփայութիւնն է : Հաւատացէք մարդուն , անոր բնաղբներուն , անոր բարեփոխումին , անոր դէպի աստուածաման կեանքը զարգացումի խմորին , որ դրուած է իր մէջ , որովհետեւ ա՛ն է սիրոյ տեսլականը , սիրոյ հաւատքը : Ու հաւատալ Սէրին՝ կը նշանակէ իրապէս հաւատալ Մարդուն : Երբ մարդուն հաւատքը դադարի մարդուն վրայ , սէրը կ'իյնայ մարդէն , կամ , մարդը կ'իյնայ սէրէն . ու ետեւէն մահը կը հասնի անոր գուը :

ԴԻՍՍԷ

Մասիսի հրահարակամ պատկերներու պատրաստութեան մէջ ցոյց տուած եզոկան յաջողութիւնները պարզ կը դնեն մեզ՝ վրայ՝ մեր անկեղծ խնդակցութիւններ եւ շնորհաւորութիւններ յայտնելու *զեկօհրաֆի* վարպէ Տիար Մ. Իսիկեանի : **Մասիսի** պատկերագրող հրահարակամ օրէն՝ ուսողի բերեցողներ նշանաւ ըլլալու են քի. **Մասիսի** մէջ երեւցած իր ձեւակերպող պատկերները ո՛ր ասիկան յաջողութիւնով կը հաւասարեցնէ ան եւրոպական արուեսին , դէմքերու նմանութեան եւ յսակութեան տեսակետով : Տիար Իսիկեան իր արուեստը հասցուցած է բարձր կատարելագործութեան մը՝ որով կը յաջողի զարմացոյցի արագութիւնով եւ արուեստական մեծ նրբութիւնով պատրաստել պատկերներ՝ որոնք պատկեր քերեն արուեստագէտին եւ անկեղծ շնորհաւորութիւն մը կը պատրաստեն անոնց նեղիմակ միակ վարպէին . Բաղդր ունենալէ ետք իրեն պէս վարպէի մը ձեռքին յանձնելու **Մասիսի** պատկերներուն պատրաստութիւնը՝ իր յաջողութիւններուն ակնասեմ՝ զինքը անկեղծապէս շնորհաւորել նշանիս պարտք մըն էր՝ զոր կատարելու հաւոյք ունիմք հոս , այսօր :

ՄԱՐԱԳԵՏՆԵՐԸ

Գունաս, նիստ կմայային էակներ՝
Մարագեաներն երագուն,
Հոգեղարքի անկողնի մը բովն իվեր
Աղօթեցին օրն ի բուն:

Վաղը ուրիշ հիւանդ մը հոն պիտի գայ,
Յաջորդ օրն ալ ուրիշներ,
Մարագեաներն մի՛ւտ կամակոր, անըզգայ,
Մահիկներուն բովն իվեր,

Պիտի հսկին կամ աղօթեն կուրօրէն
Առանց լացի, մտաւրուն,
Վարագոյրին ծակախփներուն ետէն,
Ըստանելով տրեւուն:

Իրենց աչքին տակ կը ծիւրին շատ մարդեր,
Սկեպսիկն իսկ կը փախուի:
Անոնք՝ առանց զգայութեան պիտասուեր,
Կինե՛ր՝ առանց հոգիի:

Նայուածքներնին կը սամկանայ, կը քըշի,
Կարծես վիշտեր կը սօղեն,—
Հպանցո՛ւմը քեւարախող քսիչի,
Վաշիկեմածին, օղեղէն:

Կը կ'արծես քէ ուրիշներուն ցա՛ւն է որ
Զիւշենք թաւեր քրած է,
Դալկոտ, տօգոյն մարագեաներ սգաւոր,
Զո՛ւրկ մեռնելու քախիծէ:

Իրենց գիրկը օքեւաններ հիւանդի.
Օտար կեանքն՝ կը կիւծին.
Շունչերնէն՝ խո՛ւնի, աչքերնէն՝ ա՛ւզ կը կարի,
Հո՛ղ կը հոսի մասներնին:

Հին վրէժներ կը լուծեն հոն, մահուան մօտ,
Բժի՛ւշը իսկ կ'աշլաշի,
Անոնց սիրտը՝ ինքնամոռաց, անկարօտ,
Թանգարաններ մեռելի:

Հերմակ կէտը որ կը շողայ վրանին,
Եւ սեւին մէջ կը ծիւնէ.
Կուսափայլ, ջինջ, աղաւակերայ, ամպային,
Իրենց գլխուն քաջունն է:

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍՍՄԵԱՆ

ՔՐԱՆՍԱՑԻ ՀԱՅԱԳԷՅԻ ՄԸ ՆԱՄԱԿԸ “ՄԱՍԻՍ,,Ի

Քարիզի արեւելեան լեզուներու Համալսարանէն՝ հայագէտ Բոլ Ս.Անուպօ-իւր կ'ընէ Մասիսի ուղիելու հետեւեալ նամակ-աշխատակցութիւնը, զոր հանդիմով կը հրատարակենք, հպարտութիւնը զգալով որ՝ Մասիսի բազմաթիւ ծանօթ եղիմակաւոր աշխատակիցներուն մէջ բաղդը կ'ունենանք նաեւ համբերօտ օտար գրագէտ մը, Ֆրանսացի Հայագէտ մը, որ մեր լեզուով հետաքրքրուելուն չափ կը խաբարէր ինչպէս մեր քերթով՝ Մասիսով, ինչ որ Հայ քերթի մը ցոյց տուած բացառիկ պատիւ մըն է : Իր առաջին աշխատակցութենէն ետքը, —որուն լեզուն եւ սերնդն երբեմն պատահական սխալներն ալ չենք սրբագրեր, պակելու համար օտարութեանը մէջ սիրուն անոր հրապոյրը, — վստահ ենք թէ հանգիստ պիտի ունենանք նաեւ օղջունելու իր չաշորդ աշխատակցութիւններն ալ, ինչպէս կը խոստանայ :

Մեծապատիւ Խմբագրապետ

Շնորհակալութեամբ ստացայ նամակիս պատասխանը. ուրախութիւնն ինչ կը յայտնէ ինձ պէս Երիտասարդ մի արեւելեան լեզուաց մշակող ճանաչած ըլլալնու համար. կը հարցանեմ թէ ի՞նչ բան զիս մղած է հայերէնը սովորելու. պարզապէս այն նամակեանքն եւ սերը զոր կը տածեմ հանդեպ լեզուին հնութեան : Իրաւ է որ Կարրիերի ամենէն աշխատասէր աշակերտը հանդիսացած եմ, sans me vanter, Քարիզի Արեւելեան կենդանի լեզուաց վարժարանին մէջ. ու անկէց վերջ ալ ուսումնադիւրսութիւնք կատարած եմ ի վիեննա, ի Տիփիս ու յեշմիադին, տեղւոյն վրայ գիտնալու համար հայերէն լեզուն. բայց ձեր գրած լեզույն [զուտ աշխարհաբարին] ներութեանցն տեղեակ չեմ պէտք եղած կերպիւ եւ կամ խիստ արեւմտեան մի ծանօթութիւն ունիմ սոսկ, թեւ ամենէն աւելի եւ աշխատեմ աշխարհաբարի լեզուաւ հայերէն գրելու մէջ :

Կը խոստանամ մերք ընդ մերք գրել գրական հարցերի վրայ, պայմանաւ որ հաճիք ինձ օրուան քերթերը դրկել : Միթէ որքան քերթութիւնք լեզույն պիտի նշմարեմ այս պարբերութեանց մէջ, որք կ'ընան աղէկ գաղափար չնեւեցնել, երբ ընթերցողը ստուգութեանս վրայ մի հայեացք պտտցնէ :

Այսպէս համառօտիւ նշանակելիք վերջ իմ տեսակէտ, շնորհակալութիւն կը յայտնեմ ձեր նուիրին համար, Մասիս : Ի՞նչ սիրուն քերթ կը խմբագրէք. աս դժուարութիւն չի բաւեցի հասկանալու համար ձեր գործածած լեզուն : Ինձ բուեցաւ թէ աղէկ հայերէն գիտցող մի օտար

աւելի ասակ է դիւրաւ ըմբռնելու ձեր գրուածքի ոճն քան մի Հայ որ ինչ Ֆրանսերէն գիտէ : Թեւեւ, միշտ կրկնեմ, բառեր կան որոց իմաստին չի կարողացայ քափանցել : Ոչինչ հասկացայ զոր օրինակ Տեմիրճիպատեանի ֆերբուածեն . Տիկին Զապէլ Նսայեան ինչ լաւ կը գրէ . Պետրոս Աղամեանին սլակեր գեղեցիկ գայ . Մագսուսեան՝ բարեկամա եղած է . ո՛րքան պիտի զոն բուռի իր լուսանկար տեսնելով Հայոց մէկ քերթին մէջ . Ֆիգիքա Պօղոս չեմ ճանաչեր : Ղազիկեան «Մանիզա»ի վրայ եր գրած : Անոյս ոտանաւորք իրենց բաժին բերած էին այդ բուռոյն մէջ :

Կը ցաւիմ որ հայերէնի հասկացողութիւնս բուսական սկար է զանոնք կատարելապէս ըմբռնելու, gouter ընելու համար . վարժուիմ քերեւս . կը կիրարկեմ այն տեսակ բառք, զոր չեմ կարողացած բնաւ գտնել ո՛չ մի բառարանի մէջ : Այսուհանդերձ դիւրաւ յուսահատող չեմ ես լեզուի աշխատութեան մէջ . կրնամ զարմանալ, եթէ աւելցնեմ քի այս տող գրելու կարողութեան համար վասնամ եմ գրեթէ տասնընոս ամեռ : Աւելի դիւրին կերպիւ կը հասկանամ, որքան դժուարութեամբ կը գրեմ . բնական է ասիկա այն մարդոց համար, որ կը շանան մի տարբեր լեզու գրել : Եւ չեմ խորհիր քի անսխալ կը շարադրեմ : Կարծիքներ կ'աւզեմ ինձմէ գրական հարցերի մասին . պիտի փորձեմ, քանի որ կը փափաքիմ :

Ընդունեցե՛ք իմ յարգանացս հաւատարմութիւն :

ԲՈՒՆ ԵՄԱՆՈՒՐ

“ՄԱՍԻՍ”, 30 ՈՍԿԻՆ՝ ՊԱՐԳԵԻՆ ԱՐԴԻՆՔԸ

Համաձայն մեր նախորդ Թիւի յայտարարութեան, այսօր կը ծանուցանենք որդիւնքը 30 ոսկի պարգեւով մեր բաժանորդագրական ծանօթ Մրցումին : Մեր առաջարկին ճիշդ համապատասխան պայմաններով՝ 13 հոգի հասցուցած էին մեզ՝ իրենց պատասխանները : Եւ առաջարկած ըլլալով որ՝ երբ մէկէ աւելի լուծողներ գտնուին՝ վիճակով մէկուն տահմաններ պարգեւը, կատարեցինք վիճակը, յատկապէս ներկայութեան մեր աշխատակիցներէն Զիֆթէ-Սարաֆի, Ռօտլի Սամիկեանի [Տովիո], Սմբատ Դաժեանի և Հրանտ Նազարեանի, փարատելու համար Թերեմուտներու հոգիին մէջ ո՛ր և է կատարած և ծառայած ըլլալու համար խառապէս անկողնակալ ուղղամտութեան մը : Եւ պարգեւը վիճակեցաւ՝ Պօլիէն՝ Տիար Պանրոմ Ճամճեանի, զոր կը շնորհաւորենք բազմ անգամ ըլլալուն համար տիրանալու Թանկագին հատորներու շարքի մը, ինչպէս է հոկայ Մատենաշարը անգլիական ծանօթ Համալսարանական [Encyclopædia Britannica] : Մրցումին լուծումն է [Տեսնել Մասիս Թիւ 7].—

մեղքին և ես որպէս զի իրենց պիղծ,	Էջ	44.
Եսքիւ այցելութեան գացինք իրենց,	»	16.
բարեբաղդութիւն մը նկատելու զայն,	»	72.
ինկամ կը դառնար քաղաք, գոհ ու զուարթ,	»	128.

ՍԻՐՈՅ ԲՆԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ

Է.

Պատիւը, որ ուրիշ ամէն տեսակ շահու վրայ յաղթանակ կը տանի, այդ պարագային մէջ պատտութեան կը մասնութի եւ խոյս կու տայ, երբ սէրը, այսինքն մարդկայն ցեղին շահը երեւան կու գայ եւ կը ջանայ վճռական առաւելութիւնը ձեռք բերել . . . : Այդ շահին առջեւ միայն տեղի կու տան պատիւը, պարտականութիւնը եւ հաւատարմութիւնը, զի մտքերէ կտրը ամէն տեսակ փորձութիւններու, նոյն իսկ մահուան սպառնալիքին : Անհատական կեանքի մէջ չկայ բան մը, որուն մասին այնչափ քիչ ուղղամտութիւն եւ խղճոհարութիւն մը ունենայ մարդ, որ չափ սիրոյ հանդէպ : ամէնէն պարկեշտ եւ ամէնէն ուղղամտ մարդիկը անգամ ամուսնական անհաւատարմութիւն կը գործեն, հակառակ ամէն բանի, երբ բուռն սէրը, այսինքն մարդկայն ցեղին շահը դրաւած է զիրենք : Կ'երեւայ թէ գերագոյն առանձնաշնորհումի մը տէր ըլլալուն վերահասու են, այն տեսակ առանձնաշնորհում մը՝ զոր երբեք չեն կրնար ընծայել անհատական շահեր, ճիշդ սա պատճառով որ՝ մարդկայն ցեղին շահին համար այդպէս կը շարժին : Այս հայեցակէտով՝ Շամֆօրի մտածումը նշանակալից է . «Երբ էրիկ մարդ մը եւ կին մը իրարու նկատմամբ բուռն տարփանք մը կը զգան, ինծի անանկ կը թուի որ, ինչ որ ալ ըլլան զանոնք իրարմէ բաժնող խոչընդոտները, ամուսին, ծնողք, եւ այլն, երկու սիրահարները իրարու կը պատկանին ընտելիւնով եւ աստուածայն իրաւունքով, հակառակ ամբողջ օրէնքներու եւ մարդկայն պատշաճութիւններու » : Եթէ երբեք այս տեսութեան դէմ բողոքողներ գտնուին, կը բաւէ յիշեցնել այն նորանշան ներդաւանութիւնը՝ զոր Փրկիչը Աւետարանին մէջ յայտ կու տայ շնացող կնոջ նկատմամբ, յայտարարելով որ միւսնոյն յանցանքը գործած են նաեւ այդ կինը ամբաստանող ներկաները : Պօքաչիօի Տաւնօրեակին մեծ մասը, այդ տեսակէտով, զուտ հեղնութիւն մը ըլլալ կը թուի, հեղնութիւնը մարդկայն ցեղի ոգիին՝ ընդդէմ անհատական իրաւունքներու եւ շահերու, զորս ոտնակոխ կ'ընէ : Մարդկայն ցեղի ոգին կը հարթէ եւ զիւրաւ կ'անհետացէ : զոսակարգայն բոլոր զանազանութիւնները, խոչընդոտները եւ ընկերայն պատնէշները : Յարգի թեթեւ շիւղի մը պէս կը ցրուէ մարդկայն ամէն հիմնարկութիւն, ապագայ սերունդին նկատմամբ միայն հոգածու գործունէութիւն : Սիրային շահի մը ազդեցութեան տակ ամէն վտանգ կ'անհետանայ եւ ամէնէն վտանգոտ էակը իսկ կտրիճ կը դառնայ :

Թառերախաղերու եւ վէպերու մէջ ս'ըջափ հաճոյքով ու համակրութիւնով կը հետեւինք այն երկտասարդներուն, որոնք կը պաշտպանեն

իրենց սէրը, այսինքն մարդկային ցեղին շահը, և վերջապէս կը յաղթեն իրենց անհատական շահերովը միայն զբաղած ծնող քներու անհամակիր վերաբերումին։ Մարդկային ցեղը ո՛րչափ աւելի յաղթող հանգիստնայ անհատին վրայ, տարփանքը՝ իր կարեւորութիւնով, բարձրութիւնով և արդարութիւնով՝ նոյնչափ կը գերազանցէ այն ամէն բաները, որոնք կը հակառակին իրեն։ Այսպէս՝ գրեթէ բոլոր թատերախաղերուն հիմնական նիւթը կը կազմէ մարդկային ցեղի ոգին, որ բեմին վրայ երեւան կու գայ իր տենչանքներով ու ծրագրերնեցով, կը սպառնայ թատերախաղին միւս հերոսներուն շահերուն և կը ջանայ անոնց երջանկութիւնը խանդարել։ Ընդհանրապէս կը յաջողի այդ բանին մէջ, և վերջապէս, բանաստեղծական ճշդութեան համապատասխան, դոհացում կու տայ հանգիստականին, որովհետեւ այս վերջինը կը զգայ թէ մարդկային ցեղին շահերը շատ աւելի առաջնութիւն ունին անհատական շահերէն։ Վերջապէս կեքը՝ հանդիսականը սփոխուած դուրս կ'ելլէ թատրոնէն, սիրահարները իրենց յաղթանակին մէջ ձգած ևւ մասնակից այն պատրանքին՝ զոր երկու սիրահարները կը սնուցանեն իրենց երջանկութեան նկատմամբ, մինչ իրողութիւնը սա է թէ անոնք զոհած են երջանկութիւնը՝ մարդկային ցեղին շահին համար, հակառակ ծնող քներու կանխառեւութեան և ընդդիմութեան։ Կարգ մը թատերախաղեր, որոնց թիւը շատ քիչ է, փորձած են տարբեր ձեւ մը տալ խնդիրին և յաջողութիւնով պատկել անհատներու երջանկութիւնը, հակառակ մարդկային ցեղի նպատակին։ Բայց այս պարագային՝ հանդիսականը մարդկային ցեղի ոգին պէս ցաւ մը կը զգայ և անհատներու ձեռք բերած ապահով առաւելութիւնը իսկ չի միտնար զինքը։ Իբր օրինակ միտքս կ'ընտան քույր մը շատ ծանօթ թատերախաղեր, ինչպէս Տասնըվեցամեայ Դշխոն, Բաւաղարոսիւնով Անուսնոսիւն։ Այն ողբերգութիւններուն մէջ, ուր սիրոյ վրայ ե գաւնայ խնդիրը, գրեթէ միշտ կ'ընկճուին սիրահարները։ Այս վերջինները չեն կրցած իրազործել մարդկային ցեղին նպատակը, որուն դործիք եղած էին միայն, այսպէս Ռօմէօ եւ Ժիլիէթի, Թանիսի, Տօն Գարդաի, Ուալլենշայնի, և Մեսիսի Նշանածը անուն և ուրիշ շատ մը դործերու մէջ։ Սիրահար մը թէ՛ կատակերգական և թէ՛ ողբերգական վիճակ մը կ'առնէ, որովհետեւ երկու պարագային մէջ ալ մարդկային ցեղին ոգին է որ կը վարէ զայն, կը արտադրուէ անոր վրայ՝ բոլորովին իւրացնելու աստիճան։ Իր դործերը համեմատական չեն իր նկարագրին։ Այդ պատճառով է որ տարփանքի վերին աստիճաններուն մէջ առաջ կու գայ այն բանաստեղծական ու վսեմ երանգը՝ որով իր մտածումները կը զարդարուին։ Նաեւ երեւան կու գայ այն վերահսկան ու գերբնական բարձրութիւնը, որով բոլորովին կը մոռցուի իւր սիրոյն համակ թիղիքական նպատակը։ Եւ այդ բանին շար-

ժառիթը սա է որ՝ մարդկային ցեղին ոգին և իր գերազոյն շահերը կ'ոգեւորեն սիրահարը։ Այդ ոգին պաշտօն ունի մարմին տալու սերունդներու անհուն շարքի մը՝ այն տեսակ կազմուածքով մը և այն տեսակ տարրերով օժտուած, որոնք միակ հօր մը և միակ մօր մը յատուկ են . այսինչ միութիւնը կրնայ գոյութիւն պարգեւել որչեալ սեւ, ունդի մը, զոր աղբիւր կամքը կը պահանջէ զիտումնաւոր կերպով : Երբ սիրահարը կը զգայ թէ ինչ վերանցական կարեւորութիւն ունեցող պարագաներու մէջ կը գործէ , այն ատեն երկրային իրերէն և նոյն իսկ իր անձէն աւելի վեր բարձրութեան մը վրայ կը կարծէ ինքզինքը . այսպէս՝ իր նիւթական փափաքները այն տեսակ աննիւթական երեւոյթ մը կը ստանան որ՝ սէրը բանաստեղծական դրուագ մը կը դառնայ նոյն իսկ ամէնէն հետեւակ մարդուն կեանքին մէջ , ինչ որ երբեմն ծիծաղելի կը դարձնէ զինքը : Մարդկային ցեղին շահերուն հոգածու եղող կամքը, որ սիրահարին վրայ կը պարտադրէ այդ պաշտօնը , անհուն երանութեան մը զիմակին տակ կը ներկայանայ և զայն կը յուսայ գտնել սիրած կնոջ վայելումին մէջ : Տարփանքի գերազոյն աստիճաններուն մէջ՝ այդ անուրջը այնքան շողոզուն է որ՝ երբ մարդ անոր չկարենայ հասնիլ , կեանքը ամէն հրապոյր կը կորսնցնէ իրեն համար . անկէ ետքը կեանքը անհամ , անհրապոյր և տխուր կը թուի անհատին , որուն նողկանքը նոյն իսկ կը յաղթէ մահուան սոսկութեան և տարաբաղդ սիրահարը մերթ անձնասպան կ'ըլլայ : Այս պարագային՝ մարդուն կամքը մուտք կը գործէ մարդկային ցեղի կամքին առաջ բերած յորձանքին մէջ . և կամ թէ մարդկային ցեղը այն տեսակ յաղթանակ մը կը տանի անհատական կամքին վրայ որ՝ եթէ սիրահարը չկարենայ գործել իբր ներկայացուցիչը այդ ցեղի կամքին, կ'արհամարհէ իրեն սեփական կամքին անունով գործել : Անհաւաք չափ դիւրարեկ անօթ մըն է , որ չի կրնար բովանդակել մարդկային ցեղի կամքին անհուն խոյանքը՝ որչեալ էակի մը վրայ կեդրոնացած : Անկէ ետքը ուրիշ ելք չի մնար անձնասպանութենէ զատ , որ երբեմն կրկնակ կ'ըլլայ , երկու սիրահարներու մահովը . տարբեր բան որ բնութիւնը , կեանք մը ազատելու համար , թող չտայ որ խելագարութիւնը իր քօղով պատէ յուսահատ մարդու մը զիտակցութիւնը : Ամէն տարի պատահած այսօրինակ պարագաներ կը հաստատեն այդ ճշմարտութիւնը : Բայց միայն տարփանքը չէ որ ողբերգական վախճան մը կ'ուսնենայ . գոհացում գտած սէրը յաճախ դժբաղդութեան կ'առաջնորդէ քան երջանկ . և Որովհետեւ սիրոյ պահանջները անհաշտ են սիրահարին անձնական բարօրութեան, իր կեանքի միւս պարագաներուն ու ապագայի ծրագիրներուն հետ , և այն աստիճան անհաշտ որ՝ այդ պահանջները կը քանդեն սիրահարին կանգնած ամբողջ շէնքը և սնուցած բոլոր յոյսերը և երազները :

ՄՈՒՆՈՐՈՒՄԻ ՊԱՇԵՐ

Կէս օրէն հաքը ժամը երկուքն էր Պանդոկին անձնական սենեակին մէջ Տիկին Աննա կ'երթար կուգար, նախապէս պատրաստելով տմէն բան, զերերկրային ժամուն համար: Երբեք կեանքին մէջը չճանչցած անձկութիւն մը ամբողջ էութիւնը կը պարագլկէր: Ամէն վայրկեան մարմինն վրայ սարսուռներու պարտիլը կը զգար և իր ձեռքերը ջղանձգ օրէն կը դողդղային: Մինակ մնալու գիտաւորութիւնով սենեկապանուհին տառաւընէ ըսած էր որ՝ երթայ Սէն-Փէռմէնի կողմերը չըջագայի: Սենեակին մէջ անընհատ կը դառնար, տեղ մը չկրնալով նստիլ, նախազգալով թէ ծրագիրին վերջին մասը պիտի իրականանար: Այդ ժամը հանդիսաւոր էր: Մինչև այդ տարիքը դեռ չզգացած սիրտի բարաստմանը զինքը կը տանջէին, միեւնոյն ատեն յիշեցնելով իրեն թէ՛ քանի մը վայրկեանէն քովը պիտի ունենար զայն, իրենը պիտի ըլլար այդ քսան տարեկան երիտասարդը՝ որուն տենչացած էր, որուն կը տենչար տակաւին այնչափ թափով, խելայեղօրէն և որ այնչափ անուշոքարար ընկճած էր զինքը: Երկրորդ կարգի պանդոկի հարուստ սենեակ մըն էր, պուտտ, աչքառու կարասիներով զարդարուած: Տախտակամանը դորդով մը ծածկուած էր, խոշոր քանդակակուռ սիւններով մահճակալ մը՝ որ ոսկեծիր ծիրանեղոյն վարագոյրներու ետեւ կը կորսուէր, մեծ օթոցապատ սեղան մը, երեք կամ չորս շքեղ աթոռներ, բազկաթոռ մը, և անկիւն մը՝ պատուհանին մօտիկը, բոսորագոյն թափէ շատցած բաղմոց մը: Պատերուն վրայ կ'երևային քանի մը հաս չըջանակներ, որոնց ճոխութիւնը աւելի կը չեչակէր կարասիներուն սովորականութիւնը և նկարներուն անարժէքութիւնը: Սենեակ մտած ատենդ առաջին անգամ աչքիդ կը զարնէր հայելաւոր հսկայ դարան մը: Սեղանին, ջոհակալին և շքեղ ծիրանեղոյն մարմարին վրայ խոնուած էին շատ մը փեղօրներ, որոնք բարիզեան կահաւորումին արդի ճաշակը կը յատկանշէին: Աջ կողմը դուռ մը կար, որ պզտիկ զարդասենեակին մէջ կը բացուէր, իսկ ձախ կողմինը հաղորդակցութեան մէջ կը դնէր սենեկապանուհին խուցին հետ: Կնոջ փափաքին համաձայն, ոսկերիզ սեւ փայտէ երկրորդ ջահակալին վրայ դրուած երկու հրաշակերտ անօթնեւորուն մէջ ծաղիկներ բերած զետեղած էին: Գլխաւորաբար վարդերէ կը բազկանային այդ փունջերը, մանկամարդ կնոջ չրթունքներուն պէս ծիրանեղոյն վարդեր, անոր ոսկեճոյլ անուրներուն նման դեղնորակ վարդեր, անոր այտերուն անդուստն պէս վարդաքոյն վարդեր, սենե-

Կաղաքատին վերի բացուածքէն տեսնուող մարթին պէս աժդոյն վար-
դեր : Եւ լսելոյ այս ծաղիկները կը բուրումնաւէտէին , սենեակին գաղջ
մթնոլորտին մէջ արձակելով իրենց զանազան բուրումները , սիրաբոր-
բոք տարփաջութիւնով պէս : Մահճակալին վարագոյրները քիչ մը իրար-
մէ հեռացած՝ կէս մթնոլորտան մը մէջ՝ նշմարել կուտային նրբահիւս
սուաններուն և անկողինին ծածկոյթին ձիւնաթոյր սպիտակութիւնը ,
ժանեկազարդ պղտիկ բարձիկը , կապոյտ սնդուսէ ծայրերուն կրթնած :
Իրտու մով մանկամարդ կինը չէր հալուած : Մութ մանիշակագոյն
սիրտէ սենեկազգեստ մը՝ մէջքէն սեւ մետաքսէ գօտիով մը
բռնուած միայն , հրաշալիօրէն կը ցայտեցնէր ուսերուն ձեւա-
յոյլ զիծերը , և աղբերուն ներգաշակ կորութիւնները : Մանիշակա-
գոյն մետաքսէ գուլպաներ հագած էր : Եւ պղտիկ ոտքերը կը կոր-
սուէին բարակ աղտոտմազով դրոսանդուած մուճակներու խորը : Յորե-
նագոյն հիւսակուած մազերուն վրայ , որոնք այս անգամ զլիւռն վրայ
ամրոտուած էին , սեւ սնդուսէ ժապաւէնի հանգոյց մը կը հանգչէր : Ու
չունչէն , չիտիկէն , ամբողջ մարմինէն , էլիօրօր Պլանի տարբոյ թեթեւ
բուրում մը կ'ելլէր , որ վարդերուն զգլխիչ հոտերուն խառնուած՝ խելքը
զլուխէն առնելով պիտի արդուէր լանաստեղծը :

Քիչ մը տառջ պատուհանին շղարչէ սրահակներէն մէկը բանալով
սկսած էր դուրս նայիլ , ջանալով անցորդներուն մէջէն ճանչնալ իրենը ,
որուն այնչափ անհամբերութիւնով կը սպասէր : Յանկարծ , կարծեց
նշմարած ըլլալ զայն . վարագոյրը հաղձեցով վար ձգեց , զոր բռնած
էր երկարածիք , սպիտակաթոյր ձեւքերէն մէկովը : Ու դարձած միջո-
ցին տկնարկ մը պարացուց չորս դին , վատահ ըլլալու համար թէ ամէն
բան պատրաստ էր զայն ընդունելու համար : Այդ միջոցին շրմինեին
հայրին մէջ գէմքը գիտեց և ինքզինքը շատ յուզուած , շառագունած
գտաւ . կարծես գէշ բան մը պիտի գործէր . . . : Բանի մը վայրկեան
ետքը , երկարակամ զանգակը հնչեց : Անմիջապէս տիկին Աննա բացաւ
դուռը և ընդունեց երկտասարկը , որ երկարած ձեւքը կը սեղմէր : Վեր-
ջին աստիճան աժդուսէ՝ էր : Ամբողջ սեւեր էր հագած :

— Շատ աղէկ բրիւր գալով , ըսաւ , բայց ներողութիւն այս վիճա-
կիս մէջ ձեզի ընդունելուս համար : Նոյն իսկ չեմ հագուած . . . : Զէի
կարծեմ որ այսչափ շուտ պիտի դաշիք : Սենեկապանուհիս ցորեկուընէ
դնաց ու մինչև հիմակ չէ վերադարձած դեռ . . . :

Կը ստէր . բայց լինչ կարեւորութիւն ունէր . ասանկ պարագայի մը
մէջ սուտ մը տւելի կամ պակաս : Յետոյ քանի մը սովորական խօսքեր
փոխանակեցին , անանկ խօսքեր , որոնք ոչ մէկը կամ միւսը կրնային
շահագործուիլ : Վայրկեան մը , մանկամարդ կինը թեթեւ յուզում մը
զգաց , բայց շուտ մը իր առջի վիճակը սառցաւ :

— Օգը ո՛րչափ փոթորկալից է , ըսաւ կինը , դուք միեւնոյն աղ-
գեցութիւնը չկրեցիք : Իմ ջիւղերս գրգռուած են :

Տիկին Աննա չուտով մը սուաւ երիտասարդին գաւազանը ու գլխարկը և զետեղեց ջահակալին վրայ ծաղիկներուն քովը :

Հիմակ աղատօրէն կը դիտէր զայն. անոր գէմքը նախօրէ իրիկուընէ նուազ աւրուած , գիմագիծերը նուազ պրկուած , աչքերը նուազ մաւրած , յոգնած գտաւ : Երիտասարդին վրայ կատարած քննութիւնը զինքը գոհ ձգած ըլլալու էր , որովհետեւ հրճուանքի յանկարծական ժպիտ մը ունեցաւ շրթունքներուն եզերքը : Դարձած միջոցին՝ տագոյն վարդ մը բրցնելով փունջէ մը , ընտանեքար երիտասարդին լամբակին անցուց զայն : Մարտէլ անոր կը նայէր , առանց դժգոհութեան , բոլորովին ինքնիրմէ ելած , անոր գեղեցկութեան պաշտումէն : Գիշերը մոռացումի հով մը անցած էր կարծես հողիին մէջէն , ջնջելով իր դժբաղդ սէրին մեծ արտմութիւնը . . . Իրապէս այդ վայրկեանին Սօլանժի վրայ բնաւ չէր մտածեր . գիշերը երկար ատեն խորհած էր պատահելիքներուն վրայ . վերջապէս հասկցած էր Տիկին Աննաի միտքը , միեւնոյն ատեն զիմանալով որ՝ Սօլանժը կը խաբէր : Բարեկութիւն մը եկաւ վրան և ինքնիրեն ըսաւ որ պէտք եղածին պէս վրէժը լուծած պիտի ըլլար այդ հարուստ , երիտասարդ գեղեցիկ կնոջմէն սիրուելով : Յետոյ , իր սէրին մօտիւրներուն տակ քիչ մը անախտութիւն կը պահուածէր դեռ , զոր այդ հեռապատկերը հրահրեց : Ուրեմն միտքի կատարեալ հանդարտութիւնով էր որ այդ ժամադրութեանը եկած էր : Կը դիտէր , իրեն չափ բարձրահասակ այդ կէնը , որ ծուած քիչ մը՝ ծաղիկը լամբակին կ'անցընէր : Կը նայէր անոր կիսադէմքին գիծերուն , որոնք հեշտագործօրէն կը ծփային իր յափշտակուած աչքերուն տակ : Ծոծրակէն վար , ուր մազի խարտեալ խուրձեր կը դանգուրուէին , կ'ընդմարուէր թաւաղեղ վիզին մարմարի սպիտակութիւնը և վարդագոյն մորթով ողորկ լանջքը : Տիկին Աննա կը խորհէր թէ ո՞րչափ դժուարութիւն պիտի քաշէր անոր տիրապետել համար : Իմաստուն և միամիտ Մարտէլ , ինչպէս ամէն երիտասարդ փափուկ հոգիները , պիտի մաքառէր իրեն համար լարուած այդ թակարդին մէջ իյնալէ առաջ : Բայց իր սիրատուոր կին մը համոզուեցաւ որ , պէտք էր ամէնէն առաջ անոր զգայական մոլուցքը զրգուել , և այն ատեն տեղի պիտի տար ան , անկարող իշխելու իր ընդվզումներուն , իր սարսափներուն , իր զգուանքին վրայ : Վարդը լամբակին անցընելէ ետքը , քիչ մը կեցաւ , գլուխը կախած , ջանալով նուրբ ակումներովը կտրել ծաղիկին քիչ մը երկար ցօղունը : Յետոյ գնաց սեղանին քով , որուն վրայ քանի մը թուղթեր դրուած էին . բաց ձգուած խոշոր հատոր մը թղթատելով ըսաւ .

— Միւսէն կը սիրէք անշուշտ :

Եւ առանց պատասխանին սպասելու .

Տեսէ՛ք , երէկ զիշեր ձեզմէ լամբուելէս ետքը զացի իր ամբողջ գործերը գնեցի : Կը պաշտեմ զինքը : Կ'ուզէի ատոնց մէջէն գտնել այն

կտորը որուն ամենն աւելի հաւնած էր : Բայց չկրցայ : Այն քերթուածը՝ որուն մէջ կը գտնուին սա համբաւաւոր տողերը .

Կր խորնէի քէ կիմն ի՞նչպէս կը մոռնայ ,

Եւ կ'զգայի որ մեծ մաս մը՝ իմ կեանքէս՝

Կը բաժնուի , կը կորսուի յամբաւէս :

Բայց ատիկա « Գիշերներ » էն մէկուն մէջն է , ըսաւ :

— Կուզէ՞ք զայն գտնել , ըսաւ կինը ցած ձայնով մը :

Մօտեցաւ և ոտքի վրայ, գլուխը հակած , սկսաւ հատորին թերթերը թղթատել : Դուռտաի կիմն ալ միեւնոյն կեցուածքը ունէր . ձախ ձեռքը կրթնցուցած սեղանին եզերքին , բանաստեղծին աջ ձեռքին քովը : Եւ ահա երիտասարդը՝ կնոջ գլուխը իրենին մօտը զգաց : Մետաքսաթել մաղերը դէմքը կը չոյէին . անոր շունչին բուրուժը իրենց շուրջը կը թեւածէր, գաղջ և հեշտաւէտ տարաշխարհիկ ծաղիկի մը հոտին պէս, և իր ձեռքին տակ գեղեցիկ կնոջ պղտիկ ձեռքը կը պահուէր անշարժօրէն : Այդ վայրկեանէն , ա'լ չտեսաւ թերթերը : Պահ մը մեքենաբար դարձուց զանոնք , առանց ըրածին գիտակցութիւնը ունենալու : Գիտովութեան առաջին վայրկեաններուն մէջ կը գտնուէր կարծես , երբ աչքերը կը մթազնին, երբ կոկորդը կը կծկուի , չուղկով ձայն մը հանել, երբ գաղտնիքները զիրար կը խաչաձևեն , իրարու կը խառնուին : Զգաց միայն թէ՛ Տիկին Աննաի երկու ձեռքերը իրենները կը սեղմէին կոտրտելու աստիճան , անդիմադրելի ուժէ մը գերազրգուած . տեղէն ելաւ ու մեքենաբար հետեւեցաւ զինքը հրաւիրող զիրկնդխառնումին : Բանէ մը տեղեկութիւն չունեցաւ ա'լ . մէկէնիմէկ ինքզինքը գտաւ անկողինին վրայ , տիկին Աննաի քով , որուն թեւ տնդաւաւորէն բահուանդուած էր երիտասարդին վիզին : Այն ատեն Մարտէլ բարեկամուհիին դէմքին նայեցաւ : Յաղթութիւնով ու հեշտութիւնով կը փառաւորուէր : Աղուոր խարտեաչ մաղերը քակուած էին ու կ'իյնային , սողոսկելով ձիւնառատ ձերմակութեանը վրայէն ուսերուն , որոնք սննեկազգեստին դրեթէ ամբողջովին քակուած բացուածքէն դուրս կը պոսթկային : Լանջքը նշմարեց , ու փողփողումի մը մէջ՝ վարդագոյն կուրծքերը : Աչքին զարկաւ նաեւ անոր պրկուած դիմադիծերը , սեղմուած չրթունքները , անողոք ըղձանքով մը բորբոքած , չողչողուն աչքերը : Ու վախցաւ . . . : Ընդվզումի վերջին սարսուռ մը ցնցեց զինքը : Պժգալի զգուսնք մը զգաց խորհելով ընկիւքին վրայ , որուն դեռ անգիտակ էր Բայց հասկցաւ որ ա'լ իր կամքին տէրը չէր , կը նուաճուէր և աչքերը գոցելով՝ թող տուաւ որ կորսուի գերեկրկային էակին դրկախառնումին մէջ : Մինչդեռ տարօրինակ և դառն հեգնութիւնով մը սա խօսքերը թռան իր յօգնարեկ չրթունքներէն . « Մայր , Մայր » . . . :

Անէացաւ : Դադրեցաւ խորհել . . .

Երբ աչքերը բացաւ ու ձեռքը ձակատին տարաւ , տակաւին ան-

կողինին վրայ պառկած էր , մինչդեռ ոտքերը դորգին վրայ , կուրծքը դէպի առաջ , հերարձակ զլուխը սաւանին , բանաստեղծին ճիշդ քովը , Տիկին Աննա կու լար։ Անուշ արցունքներ , երջանկութեան արցունքներ , որոնք կը սահէին տոգոյն աշտերուն վրայէն , բծաւորելով անկողինին անբծութիւնը : Երբ տեսաւ երիտասարդին աչքերուն բանալը , տօթահար ոտքի ելաւ , գլուխը դարձուց ու հազուադէպ խառնակութիւնը շտկեց , առանց բառ մը ըսելու : Տիկին Աննա մազերը յարդարեց , սենեկազգեատին կոճակները կոճկեց : Հայկերէն առջեւն էր , անոր մէջէն կը տեսնար երիտասարդը , որ ետին կեցած՝ մուկեային տօգունութիւնով մոլորուն աչքերով շեշտակի դինքը կը դիտէր : Յանկարծ Մարսէլ դեռին ծուկաւ , դեռատի կինն ալ ետին դարձաւ : Անձնատուութեան միջոցին զրկանէն սահած էր՝ անկողինին վրայ ու հիմակ ալ դեռին կ'իյնար այն լուսանկարը՝ զոր Սօլանո երիտասարդին նուիրած էր , իրենց սէրին առաջին օրերուն : Վեր վերցուց ու բարկութեան նոսրայի մը մէջ զայն կտոր կտոր ըրաւ և սեղանին վրայ նետեց : Տիկին Աննա՝ Մարսէլին մօտեցաւ և լանջքը անոր ուսերուն յենած ու չրթունքը անոր վիզին .

— Մարսէլ , ըսաւ , ներէ՛ , քիչ մը առաջուան ըրածնուս համար , ըսէ՛ , կը ներե՞ս . . .

Կը վախնար որ պիտի խտչէր , ընդձլուով մը տեղի պիտի ունենար . սակայն խիստ յուզուած ձայնով մը պատասխանեց .

— Երկուքնիս ալ յանցաւոր ենք , կը ներե՛մ . . . Թէ , ի՞նչքան կը տառապիմ . . . : Մեկնիմ : Պէտք է որ մեկնիմ : Մնաս բարով : Ու գնաց գլխարկը և գաւազանը առաւ : Սաստիկ դուռնաւած էր և աչքերուն մէջ արցունք մը կը դողդեղար : Տիկին Աննա անգամ մըն ալ անոր վրայ խոյացաւ .

— Վաղը իրիկուն քու տունդ պիտի գամ , սիրելի Մարսէլ , մի մերժեր , գիտ՛ վրաս : Կը պաշտեմ քեզի , ամբողջ կեանքս կու տամ քեզի , ծնրաջոք կը պաղտալիմ , ըսէ՛ , պիտի սպասեմ ինձի :

Հաւանութեան նշան մը ըրաւ . չէր կրնար խօսիլ , ա'յնչափ յուզուած կը սեղմէր կոկորդը . և առանց ակնարկ մը ձգելու այդ սենեակին վրայ , որուն մէջ Սէրին ինչ բլլալը սորված էր , դէպի դուռը առաջացաւ , ու վարադոյրները մէկդի ընելով՝ աներեւութացաւ :

ՆՈՒՊԱՐ ԵԱԶՐՃԵԱՆ

Ինչպէս կը դիտեն ընթերցողները՝ Մասիսի այս քիւր կը հրատարակեմ չորս էջ յաւելումով , նիւթերու առասուրբեան տեղ տալու համար :

ՏՕՔԹ. ՅԱԿՈԲ ԹՕՓՃԵԱՆ

Տօքթ. Յակոբ Թօփճեան ծնած է 1876ին, Այնթապ, և որդին է Յովնանէս էֆ. Թօփճեանի, վաճառական տեղին մէջ։ Իր նախնական ուսումը ստացած է Այնթապի Ներսէսեան և Աթենական վարժարաններուն մէջ, ուր մնացած է մինչև 1888 թուականը։ Յետոյ Ալշըզեան Ս. Պատրիարքին միջոցով՝ զրկուած է Էջմիածինի Գէորգեան ձեմարանը, ուր հետեւած է 6 տարի ձեմարանի երկրորդական վարժարանի ծրագիրին և 3 տարի ալ մասնագիտական ծրագիրին։ Հոն ուսած է սուսերէն, ֆրանսերէն, հայերէն և գերմաներէն։ Անկէ ետքը՝ գացած է Հալէի գերմանական Համալսարանը, ուր հետեւած է փիլիսոփայութեան, պատմութեան, լեզուաբանութեան։ Ստացած է «Փիլիսոփայութեան Տօքթ. Թէզու»ութեան և «Գեղեցիկ Դպրութիւններու Մագիստրոս»ութեան ականականքը։ Զոնկէ է որ Ս. Պատրիարքին հրաւերով՝ կոչուած է, 1903ին, Արմաշի Գորեւանքին մէջ ուսուցչութեան, ստանձնելով զերմաներէնի և փիլիսոփայութեան ուսուցումը։ Տարի մը ետքը, հրամարելով իր այդ պաշտօնէն, Պոլիս եկած է և նուիրուած ուսուցչական պաշտօններու, ստանձնելով Կեդրոնականի և Պէրլէրեանի մէջ բարձրագոյն դասարաններու դասախօսութիւններ։ Խմբագրական պաշտօն վարած է Բիւզանդիոնի մէջ, միեւնոյն տուն աշխատակցելով Տ. Բարդէն Վարդի խմբագրած Լոյս կրօնամթերմին։ Վերջերս, մօտ երկու տարի առաջ, կոչուեցաւ Արեւելի խմբագրութեան պաշտօնին։ Հրատարակած է հայերէն և գերմաներէն աշխատասիրութիւններ՝ ձեռագիրներու ուսումնասիրութեան, Հայ վանականութեան սկզբնաւորութեան և եկեղեցական մատենագրութեան վրայ։



ԻՄԱՀ ՏՕՔԹ. ՎԱՐԴԱՆ ԶԱՐԵԱՆ ԷՖ.Ի. — Մինչ Մատիսի այս թիւին

մէջ, մեր խմբագրականով առիթը կ'ունենանք խօսելու Տօքթ. Վարդազարեան Էֆ.Ի մէկ կտակին վրայ, վերջին պահուն կը լսենք իր մահը, որ տեղի ունենած է Բանկալմիի իր բնակարանին մէջ, ծանր հիւանդութենէ մը ետքը՝ որով կը տառապէր։ Իր մահով Հայ բժշկական գասը կորուստը կ'ունենայ կարեւոր անդամի մը։ Անձամօմ մը չէ ինք, 35 տարիէ իվեր բժշկական տաղանդէրէն և Ազգ. վարչական շրջանակներու մէջ իր ծառայութիւններով։ Անդամակցած է Պատրիարքարանի Ժողովներու, հանրային շահին համար աշխատելով միշտ։ Իր վերջին պաշտօնը եղաւ Ռուսցիներու Օգնութեան Միատեղին Խնամակալութեան անդամակցութիւնը։ Սիրտի հիւանդութիւն մը զգեանեց զինքը և Թերթը մամուլի յանձնուելու մօտ՝ միջոցը կը սրտի մեղի, ծանրանալու իր հանրային գործունէութեանը վրայ։ Մեր ցաւակցութիւնները կը յայնաներ Վարդազարեան և Թօքթեան ընտանիքներուն։

ՆԱՂԱՇ ՅՈՎՆԱԹԱՆԻ ԳԻՆԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Յորժամ եղև զարուն արևւ ծագեցաւ,
Հարաւ հողմն փչեց, սառն հալեցաւ.
Երկիր կանանցաւ, ծառն ծաղկեցաւ *
Խմենք գինի, բան է, նա Աստուած շինե:

Որ ընկերք նստին ծաղկեալ ծառի տակ,
Ձեռացներն գինի՝ կարմիր եւ յսակ.
Թափն մեջն անկանի ծաղիկ սպիտակ,
Խմենք գինի, բան է, նա Աստուած շինե:

Դինին ոչ գիտես քե զի՞նչ ծնանի,
Մարդոց կեանք՝ վայրի ծաղկի նմանի.
Որ աշուտ բացուել է վաղիւ անցանի:
Խմենք գինի, բան է, նա Աստուած շինե:

Նոր զարուն, նոր արեւ, Զատիկ շնորհագարդ,
Այսուհետեւ բացուի մանուշակ եւ վարդ.
Զայն քոչկոց 'ւ բուրբուրի լսե ամեն մարդ,
Խմենք գինի, բան է, նա Աստուած շինե:

Առեք կարմիր գինի եւ չցեք քառով,
Բերեք քաջա զառ սեւի սարքօշով.
Հարդի փշաւ ձգեք մեխակով, կշով.
Խմենք գինի, բան է, նա Աստուած շինե:

Թող ջիւանն ճեղ նստեք, ջուր շինի եւ խոտ,
Կարմիր գինի խմեք մեկզմեկի մօտ.
Մխմեանց տոհմ ծաղիկ, վարդ անուշահոտ,
Խմենք գինի, բան է, նա Աստուած շինե:

Այլ եւ պարկեշտութեամբ խմելն է հալալ,
Ո՛չ կռուիչ, ո՛չ արբիչ եւ ո՛չ բարկանալ.
Ուրախութեամբ ընկել, սիրով զուարճանալ,
Խմենք գինի, բան է, նա Աստուած շինե:

Նիստ քո մեղիներն շաց Նաղաշ Յովնաթան
Աշխարհս անցաւոր է, չե մնացական.
Դուք կերեք, խմեցեք, կոքարք պատումական,
Եւ օրհնեցեք զԱստուած միշտ եւ յաւիտական:

ԹՎ.ԿԱՏԻՆՅԱՆ

* Նաղաշ Յովնաթան ժԶ.դդ Դարուն ապրող Հայ երգիչ մըն է, արեւելեան Հայերու մէկ:

Հ Ո Վ Ա Ն Ո Ց Ս

Երէկ, հին հազուատներուս պահարանը պրողտած ատեն, հանդիպեցայ հովանոցիս : Ճերմակ հովա.ոց մը, վրան վոքրիկ կապոյտ ու վարդագոյն ծաղիկներով ցանցնուած : Ա'լ հինցած գտայ զայն . ծաղիկները թօշներ էին և ճերմակը դեղներ . թելերը խարխլած ու բրթած էին, և կիսաբաց մնացած էր, ոչ կը գոցուէր և ոչ կը բացուէր : Մտածեցի նետել անպէտ առտրկան . բայց բան մը բռնեց ձեռքս . յիշատակներ, հին, անուշ կամ դառն յիշատակներ կապուած էին անոր, որոնք արգիւնցին որ նետեմ հովանոցս : Ոչ կը գոցուէր և ոչ կը բացուէր, որով հետեւ, խորհեցայ, այնչա'ի դեղուն էր յիշատակներով որ՝ չէր կրնար գոցուիլ և կը մերմէր բացուիլ, վախճալով որ հոն դիզուած երազները կը թռչին . . .

— Այո՛, երկար անուշ ժամեր եմ անցուցեր քեզի հետ, թօշնած ծաղիկներով հովանոցս . ծովուն ափունքին աւազին վրայ երկար ժամեր նստեր եմ քու շուքիդ տակ, պիշ պիշ նայելով ճերմակ ալիքներուն և և հոն հրեսեր եմ երազներ՝ որոնց միայն դո'ւն տեղեակ ես : Մացառուս բլուրներուն նեղ ճամբաներուն երկայնքն իւրեր՝ քեզի հետ ելած եմ միայնակ, երբ միջօրէին արեւը կ'այրէր ամէն կողմ, և քամին կը փչէր, կը փչէր խաղալով գլխարկիս ժանգաւէններուն ու ճանդիկներուն հետ, և հո'ն, բլուրին վերեւ, դո'ւն պաշտպանած ես զիս հովին գէմ ու հսկած որ անիկա խորհուրդներս չառնէ չի տանի . . .

Ծնորհապարտ եմ քեզի . շատ անգամներ, դուն ճիշդ ատենին հասած ես պահելու ամբած գէմքս քու բացուած թեւերուդ տակ և արգիլած որ մարդոց հետաքրքիր ակնարկը չհանդիպի բլրերուս ծայրը դողացող արցունքներուս . . .

Դուն քու ամէն մէկ անկիւնիդ մէջ տեղաւորած ունիս աղուոր բան մը անցեալէս . քու ամէն մէկ դռնատած ծաղիկիդ մէջ չիրակահացած ըլլալուն համար միշտ սիրելի մնացած երազ մը կայ թաղուած : Ուրեմն, պիտի պահեմ քեզ, թօշնած ծաղիկներով հովանոցս և երբ կեանքիս մէջ դան օրեր, դռնատ ու դեղնած քեզի պէս, ան ատենը եկո՛ւր պատմել ինծի մէկիկ մէկիկ, անգոյն ծաղիկներուդ մէջ պահած անուշ անուշ յիշատակներս անցեալին :

ՄԱՆՆԻԿ Ռ. Յ. ՊԵՐՊԵՐՅԱՆ

ՆՇԱՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ.—Մանգումէի և Լոյսի Տնօրէն Յովնանէսէֆ. Դայսէր-
եանի նշանախօսութիւնը կատարուեցաւ կիրակի օր, Սիլւատր, Տանձիկեաններու բնակարանին
մէջ, Օր. Ազնիւ Տանձիկեանի հետ : Մեր շնորհաւորութիւնները՝ մեր պաշտօնակից Մանգումէի
Արտօնատէր Յովնանէսէֆ. Դայսէրեանի :



Երկաթեղենի ծանօթ փան-
տական Էսենսեն Եզրայրները՝
ղծբաղդաբիւնը ունեցան կոր-
սնցնելու իրենց մայրը, մահովը
Տիկին Աճնիկ Էսենսեն , որ
տաղի մէջ կը ձգէ իր զուազ-
ները՝ Ղարաբախի Խանականապո-
րեան ժողովան տնտեսապէս Յակոբ
Էժ . Էսենսեն , ինչպէս նաեւ
Կարապէտ , Արամ եւ Հայկ
Էսենսեն Էժ.ները , Տիկ. Սե-
րաբիկ Կապարեանը (Եսթրէի դա-
սական եննիչ Միսսէ Էժ. Մա-
կարեանի կիներ) եւ Օր. Աստիճա
Էսենսենը : Հանգուցեալ Տիկինը
կը օրինակէի մայր եւ
տնտիկն կը բոլոր գեղեցիկ
անուն մը եւ առաքինի ու ազ-
նաստէ կնոջ յիշատակ մը, նուիր-
ումը իր զուակներուն դաս-
տարականութեան, խնամտանքը հազա-
րաւորակով Տիկ. Աճնիկ ծնած
էր Պախ, սերած բարեհաճ ըն-
տանիքէ եւ տնտեսացած հան-
գուցեալ Գրիգոր Էժ. Էսենսենի
նկ . Աղջիկն էր Կեմարիա

Մանկուսան զիղէն մեծանալով Արմենի Կարապէտ Հարգեան Քեօխնի Պաշի Հանի
Միքսի Գալմախ , որ Երանի Ս. Երանդաբիւնը կառուցանող Կարապէտն է : Հայր
Միքսի Գալմախ , 1899ին մեռած է 110 տարեկան հասակին մէջ : Տիկին Էսենսեն երի-
տասարդ հասակին մէջ աչի մնալով՝ կասարեալ հայր մը եղած է իր զուակներուն՝ հակե-
լով անոնց կրթութեան , դաստարակութեան , ինչպէս նաեւ հաշտեալն օժանդակ
ներէն լեզուն կը գրէ ու ի կարգաւ : Աղետներու միջոցով եւ հարստիւ աղջիկնե-
րու հոգածու մօր մը ձեռք կը կարկառէ : Սիլիսարի Ս. Խաչ Ղարապէտին աղջիկնե-
րու բաժնիկն խնամակալութեան ժողովան տնտեսապէսնին եղած է : Սիլիսարի Ս. Աճնիկն
Պարզաւոր Տիկիններու Ընկ.եան գործով անկամեւելն եղած է տնտիկն , Գի-
րեկնին կորսնցնող ընտանիքներու զաւթի նուիրատուութիւնները խիստ շատ են : Աճնիկ
աշխատեալ մըն էր . խնամէ եւ խելացի եւ կարող կարեւորաւ : Իր տնտիկն արժանի
զուակներ բաշտած էր բնէ իր արդիւններ , որոնցմէ Յակոբ Էժ. Էսենսեն տնտեսական
ապագաէն մէջ համբաւաւոր փանտականի իր տնտիկն զաւթ . ծանօթ է նաեւ ազգ. վար-
չական շնորհակալին մէջ . որ երկար տարիներէ ի վեր կարեւոր ծառայութիւններ ունեցած
է : Հանգուցեալ Տիկինին յարակաւորութիւնը կասարեւոր կիրակի օր, Երանի Ս. Ե-
րանդաբիւն Եկեղեցիին մէջ . մեծ հանգիստաւորութիւնով եւ ներկայութիւնով Հայ եւ
օտար բազմաթիւ ծանօթ անձնաւորութիւններու : Հանդէսին կը նախագահէր Ս. Պարսիա-
ր , իր տարբեր ունեցալով եպիսկոպոսներու , Ղարապէտներու եւ Բանաստեղծներու մեծ
քիւ մը : Մեծաշխատանքաւորութիւնները կասարեւոր էին , դաստարակաւոր խոսեցաւ Ս.
Պարսիաւոր , վեր հանելով ազնիւ ձիւրները հանգուցեալ Տիկինին Ենայ դազալոր հանդիսա-
ւոր բախորով դուրս հանուցաւ տեսարեկն եւ գրուելով տնտեսապէս ձեռքով շնորհակա-
լանի մը մէջ , փոխադրուցեալ Բազապաւ , ուրիշ տնտեսաւորաւոր վարձումը կառա-
քարով որ իր մէջ ունէր բախորին նշանակներ՝ իրենց կառուելով , տնտեսաւոր Սիլի-
սար , որ մարմինը ամապիտեցաւ տեղին Ազգ. Գերեզմանատնին ընտանեկան դաստա-
րանէն մէջ . Գերեզմանները Եկեղեցիին մէջ ինչպէս գերեզմանատնը՝ իրենց զուակներու քիւ-
նէրը յայտնեցին Յակոբ , Կարապէտ եւ Արամ Էսենսեն Էժ.ներուն , որոնց կը յայտնեն մեր
ցուանցնութիւնները , իրենց դառն կորուստին առիթով :

ՀԱՅ ԲՈՇԱՆԵՐՈՒ

Լ Ե Ջ ՈՒ Ն

ԻՐՈՅ. ՖԻՆԷԻ ԵՒ ԲԵՇԿԱՊԵՏ ՍՈՅՏԷԼԻ

ՍՇԽԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մինչեւ հիմա Հայ մաղաքը յոշանե-
րու [զննու] լեզուին վրայ եղած ուսում-
նասիրութիւնները անկասար եւ մեծ մասով
ցիրուցան էին : Իսկ անոնց լեզուին քերա-
կանութեան մասին հանի մը մանր դիտողու-
թիւններէ զատ, ուրիշ որ եւ է ծանօթու-
թիւն չէր տրուած : Հայ բուսաներու վրայ
հրատարակուած հանի մը ունագրաւ ուսում-
նասիրութիւններ,—որոնցմէ մէկը Իգմիշեան-
ցով ալ վարձատրուեցաւ,—կը նեղեղաց-
նէին մասնաւորապէս անոնց բարեբեր, գոր-
ծունէութիւնը եւ լեզուին բառացանկը :
Քերականութեան եւ բառացանկին բնու-
թիւնը պակաս կը մնար եւ այդ պակասը
լրացուցած է Բրոժ. Ֆինի՝ Բեդեապուրի
մէջ՝ հրատարակելով գեղմաներէն հասար մը,
որ մասնաւորապէս կը ծանօտանայ Հայ բու-
սաներու բառացանկին բնութեան եւ քե-
րականութեան վրայ : Գիբիին մէջ գեղեղ-
աւած են բազմաթիւ բուսաներու լեզուէն բա-
ռեր, մաս մը՝ երապական տառերով եւ
նուներէն նշանակաւորելով եւ մաս մը հայ
տառերով եւ հայերէն նշանակաւորելով :
Առաջ կը քերէ հոգեւ հաստուններ՝ քարգ-
մանութիւններով մէկեղ, լեզուին քերակա-
նական շարադասութիւնը եւ նկարագիրը
ցոյցնելու համար : Իբր Լեզուագոյրիւն
դիտելի է քէ՝ Հայ բուսաներու լեզուն ունի
արեւմտեան հայերէնին ժայր, քէն բառա-
ցուցակները ցոյց տան նոյն լեզուին ննդկա-
կան ծագումը, բացի խանարումի ձեւե-
րէն, որոնք արեւմտեան գաւառաբարբառ-
ներու հետ խիստ խնամաւորին ունին : Նոյն-
պէս բայերու յօժողութիւնները կը դիտուի
որ՝ կը վերջանան արեւմտեանին պէս *ել, իլ, ալ* :
Եւ նշանակելի է որ միշտ առաջինը
յանախաղէպ է, երկրորդը շատ քիչ կայ եւ
վերջինը միայն հանի մը աներեւոյթի ձեւով
գործածուած բայերու մէջ կ'երեւայ : Նոյն-
պէս դիբիին մէջ խօսուած է բայերու դէմ-
բեր, բիւիին եւ ժամանակին վրայ ման-
րամասնորէն : Իսկ բառագիրքին խղճամիտ

բնութեան երեւան եղած է որ՝ բուսաներուն
լեզուին մէջ կը գտնուին Սանսկրիտ, Նոր
Հնդկի, Հայ, Պարսիկ եւ ուրիշ օտար լե-
զուներէ ալ բառեր, քէն կը մնայ ստուար
թիւ մը անլուծանելի մնացած բառերու,
զորս Բրոժ. Ֆինի կարծիքով գիտութեան
ներկայ միջոցներով կարելի չէ բնութեան
ենթարկել : Ֆինի Հայ բուսաներու լեզուին
մէջ գտած է 31 իրարմէ տարբեր տառեր,
զորս խնամով դասաւորած է : Որչափ որ
ձայնաւորներու մասնագիտական արժէքը չէ
կրցած ստուգել, սակայն բաղաձայններու
մասին գոնացուցիչ եզրակացութիւններու
հասած է : Այս գիրքով Ֆինի Հայ բուսաներու
լեզուին ուսումնասիրութեան առաջին եւ
ղլխաւոր հիմք կը դնէ : Անոր բառամբեր-
քին եւ քերականութեան զլխաւոր տարբեր-
քնէնով կը դիտարկէ անոր միւս գաւառ-
աբարբառներու մէջ գտնուած դիբի : Գոր-
ծը տածանելի է եւ գնահատելի է որ՝ Ֆինի
—հասկցողներուն կարծիքով— յաջողած է
այդ դժուար գործին մէջ : Իր աշխատու-
թիւնը նաեւ կարեւոր է աշխարհաբարի տե-
տակէտով, որովհետեւ մեր արեւմտեան
լեզուին հետ համեմատելու ձեւին տակ բա-
նական լուսաբանութիւններ տրուած են
անոր մասին :

Ինչպէս յայտնի է, աշխարհաբար մասե-
նագրութիւնով զբաղողներու, առաջին ժո-
ղովրդական լեզուով գրուած գրութիւննե-
րուն կարգին մէջ նշանաւոր տեղ մը կը
գրաւէ Միսիբար Հերացիի *Ջերմանց Միսի-
բարութիւնը*, որ 1184ին գրուած Բժշկա-
րան մըն է եւ որ շատնց ուշագրութիւն
գրուած է եւ Հայ երկու բանասէրներ զոյն
բնութեան առած են : Այսպէս, Հ. ԳԼԸՈՂ
Յովհաննէան զայն բնութեան առած է Գաւ-
կորէնի եւ Տօթ. Թորգոմեան՝ բժշկական
տեղակէտով : Սակայն լիակատար ուսում-
նասիրութեան մը պէտքը կը ներկայանար եւ
այդ պէտքը կու գայ լրացնել, *խան տարուան*
աշխատութիւնով մը, հմուտ գերման ար-
ուեստագէտ մը՝ բժշկապէտ E. Seidel, որ ծա-
նօթ է բուրք եւ արար լեզուներու եւ մօ-
տէն կը հանչնայ Արեւելքը եւ որ ձեռնա-
կած է բարգմանելու այս շանեկան գործը :
E. Seidel — մինչեւ հիմա անյայտ իբր հա-
լերեմագէտ—ինչպէս կը տեսնուի իր քրտ

քաղցանութեան, իրապէս մեծ հմտութիւն մը ունէր հայերէնի, որովհետեւ Հերացիի քաղցանութիւնը խնդրում ըլլալով ռամկօրէն, արաբերէն եւ արաբացած յունարէն բառերով եւ քնդգրկած ըլլալով գիտական ճիշդ սը՝ կը ներկայացնէ բազմաժանր դժուարութիւններ, ինչպէս հեղինակը ինք ալ կը խոստովանի : Այս դժուարութիւնը մատով իրեն համար հարթուած է երկու Հայ ուսանողներու կողմէ, որոնք սովորէին բառերու քաղցանութեան կամ ծանօթացումին նպաստած են : Այս աշխատութիւնը միայն Հերացիի գործին ստոր քաղցանութիւնը չէ, այլ նաեւ երկար լուսաբանութիւններու շարք մը կու տայ, որոնք քէ՛ մեր ռամկօրէնով զբաղողներուն եւ քէ՛ երուպացի գիտնականներու համար մեծ կարեւորութիւն ունին : Այս լուսաբանութիւններուն մեծ մասը գիտական բառերու լուսաբանութիւններ են, զորս արաբերէն, պարսկերէն եւ յոյն լեզուէն առնելով կը գործածէ Հերացի յոյսի ապաւոր ձեւերով : Բնական եւ կենդանաբանական անունները, դեղորէներ եւ ձեռագրական վեպներ պատշաճօրէն լուսաբանուած են : Լուսաբանութիւններու հոգաւորիւնը եւ հարստութիւնը ցոյց տալու համար կը բաւէ քսէլ միայն քէ՛ գիտուն մասնագէտը ձեռքի տակ ունեցած է բազմաթիւ բժշկական հիմն գրութիւններ, զանազան լեզուներէ եւ հայերէն : Իբր յաւելում՝ գործին կցում է նաեւ Միսիբար Հերացիի մէկ կենսագրութիւնը եւ մասնագրական տեսութիւն մը անոր գործին վրայ : Ամէնէն գլխաւոր մասերէն մէկը կը կազմեն Հերացիի յիշատակած հին բժիշկներու խառնակ անուններուն համապատասխան ուղիղ անունները ճշմանակելու համար իր բրած աշխատութիւնները : Նոյնպէս շահեկան են գիտական բառերուն զերմաներէն, արաբերէն, հայերէն, յունարէն ցուցակները :

Վստի Բուսնական Հիւսիսատարանի Թարգման Ազն. Մարտիրոսէֆ Գարբիէլեան տարւածն մը Մասիս նտիրած է Սդեղի Հայ վարժարանին, ուր սկսանք զրկել թերթերը, շնորհակալութեամբ արձանագրելով այս նուիրատուութիւնը :

ՄԵՐ ԿԵԱՆՔԷՆ

Իզմիրեանց Գրական Յանձնաժողովին վերջընձեր մրցանակաբաշխութեան առարկայ դարձած գաւառաբարբառի բառարաններէն, ինչպէս նաեւ Պոլսահայերէնի բառարանէն ընտրողաբար՝ աշխարհիկ լեզուի մասնաւոր Բառարան մը պատրաստելու հոգը յանձնուեր է ծանօթ գրող Թէոդիկի, որուն մէկ աշխատութիւնն ալ վարժարանած էր Իզմիրեանցէն, յիշուած մրցանակաբաշխութեան առնել թէոդիկի պիտի աշխատակցի նաեւ ծանօթ ու բազմաճանաչ բանասէր Թաշիկ Ուզուրիկեան, որ մեծ մասնագիտութիւն ունի, լեզուական հարցերու մասին : Այս աշխատութիւնը պիտի վճարուի մրցանակաբաշխութիւններէն աւելցած գումարով մը :

§ Թաշիկեան-Եղեանեան նպատակով Մայր-Վարժարանի վերաշինութեանը պիտի սկսուի առաջիկայ ապրիլի մէջ և հիմնադր շինուածանիքներու գնումի և հայթայթումի նպատակաւ առաւելութիւններ կը տեսնուին : 7000 ոսկիի մօտ գումար մը պիտի ծախուի այս շինութեան, որով խնայողութիւնը էական պատահար մըն է : Հետեւաբար փափուքելի եւ անհամեմատ է որ՝ բոլոր գնումները և արհեստաւորական զործերը տեղի ունենան նուազուրից, որպէսզի գործին հետ մօտէն կապ ունեցող աս կամ ան առանձնաշնորհեալ հայթայթիւններ և վերականգնարհեստաւորներ իրենց շահին սիրուն տուածէ չի տան շէնքին :

§ Քեանալըրէն Պրն. Արշակ Խաղէչեան, հակառակ բանի մը անգամ մեթոճած ըլլալուն, նորէն գլխած է Ս. Պատրիարքին, Թաթանազարին խնդրելով որ Արմաշի Գարեփնէնը ընդունուի, կուտակոն ձեռնադրուելու համար : Կ'երևայ թէ աս տղան ալ կրէրանալու սէրէն է բռնուեր, ո՛ր զիտէ ի՞նչ մտածումէ մղուած : Մեծ սխալ մը գործուած կ'ըլլայ, եթէ ընդունուի այդ ասպարէզին մէջ, ինք հիմնովին անընդունակ, անյարմար և կոշտմէն հեռու ըլլալուն Կրեթականութեան, ինչպէս ճանչցած ենք զինքը [*] :

§ Պոլիսի օտար կրօնադատական մարմինը կարենոր կրօնատ մը ունեցաւ նոյնպէս շարժու, մտնովը անգլիական դեպան Սըր Նիքոլաս Օ'Բանօրի : Յուդայականութիւնը կատարուելով երկուշաբթի օր Բերաի մէջ, մարմինը փոխադրուեցաւ Հայտարար-Փաշայ անգլ. Դերեգմանատունը, ուր ամփոփուեցաւ :

[*] Պրն. Արշակ Խաղէչեան մեզի բաժանորդ է, կանոնաւոր վնարդ :

Հիմնադիր Կ. Ս. Ինթիքիճեան : Արտատպ 80ԳԹ. Ե. ՄԱՍԻՍ : Տպագր. ՃիճԱՆ.

Հեղինակութիւնը

ՏՕՐՔ. ՃՕՐՃ ՈՒՕՇՊԸՐՆԻ

Թարգմանութիւնը

ԱՐՐ. ՏԷՐ-ՅԱԿՈԲՅԱՆԻ

հաւատարմութիւնը՝ բաւական են շեշտելու կարեւորութիւնը ամէն մարդու՝

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆՆԵՐ

զիրքին, որ պէտք է կարդայ ամէն անհատ և կարդացնէ իւր ծանօթին, և որուն բովանդակութեանը անգիտակ մնալը՝ մեծ պակաս մըն է, ուսուցիչի մը համար, ինչպէս ուսանողի մը, տարեցի մը համար, ինչպէս երևոտասարդի մը, կարդացե՛մ այս հատորը : Ո՛չ միայն կարգացէք, այլ նաև ունեցե՛ք զայն անվրէժ, այն նկատուածով որ՝ Տօրք. Ուօշպրնի հեղինակութիւնը և Արր. Տեր-Յակոբեանի թարգմանութիւնը եղող զիրք մը չունենալ՝ նշանակելի թերի մը ձգտմ ըլլալ է մասնագիտացանքներու մէջ, կեդրոնաւորուելն է Մատթէոսեան Թղթալաճառանոցը և զինը 5 զրք :

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԻ

ԻՐ ՏԵՍԱԿԻՆ ՄԷՋ ԵԶԱԿԱՆ

ՀԱՅ-ՕՍՄ՝ ՄԵՐ ԲԱՌԱՐԱՆԸ

Պատշտական, Գիտական և ուրիշ կարեւոր բառերու Ֆրանսերէնով և բազմաթիւ օրինակներով ձոխացած, իբր **50.000** բառ, ոճ, ասուքիւն :

ԵՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՊԵՏՐՈՍ ԷՅ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

Օգնական Պետական Խաբուրդի և Տնօրէն Պէրպլեան Վարձարանի

Այս երկասիրութեան վրայ երկար զրկել աւելորդ է . միայն սաշափը ըսենք որ Ամե՛ն. Ս. Պատրիարք Հօրմէն և Գեղ. Եղիշէ Եպսկ. Դուրեանէ զար. Թուրք և Հայ նշանաւոր գրագէտ լեզուաբաններէ գնահատականներ կան այս խղճամիտ և յոգնալատատակ երկասիրութեան սկիզբը : Թուրք նշանաւորագոյն գրագէտ-բանաստեղծ Էքրէմ պէյ, Բէշտապէյ, Ահմէտ Բատիմ պէյ, հայագէտ Սիւրէյա Պէյ, Պատրիարքարանի Թուրք. Դիւանապետ տաճկագէտ Կարապետ էֆ. Խաչատուրեան և արեւելագէտ Սաեփան էֆ. Կուրտիկեան թուրքերէն գնահատականներ ունին : Հայերէն գնահատականներ ունին Գուրգէնի, Զօհրապի, Պօղոս Քէրէստէճեանի, Ելքէնճեանի, Ուղուրիկեանի, Հրանտ Ասատուրի, Փանոսեանի, Թէոֆիլի, Գաղանճեանի պէս բանասէրներ և գրագէտները երկը ունի 900ի մօտ էջեր, 8 փոսթօ զիրով չարուած . ձեռնած է ուսուցչապետ Ռ. Յ. Պէրպլեանի և կը պարունակէ հեղինակին մեծագիր լուսանկարը, Թուրք ընտիր, ապագործիւնը ընտիր [Տէր-Ներսէսեան և Պէրպլեան], կազմը փառաւոր [Մատթէոսեան] : Կը վաճառուի կանխիկ 35 զրուշի : Միակ կեդրոնաւորուելն է Պալկնց Գրագոնը : 2—10

Բանաստեղծական նորագոյն հրատարակութիւնն է
«ՄԱՍԻՍ»Ի ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻՆ ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

“ՊԱՏՐԱՆՔԻ ԾԱՂԻԿՆԵՐ.”

ՄԵԲՈՒԺԱՂ ՊԱՐՍԱՄԵԱՆ-Ի

Փնտել տակն կողմ այս հասորը : Դիմը 5 դրոշ :

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԶԻՅԹԻ-ՍԱՐԱՅԻ

ՄԻԱՄԻՏԻ ՄԸ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Դեղեցիկ տպագրութիւնով , գեղարուեստական կողքով , զրական
հրատարակչ ներքինով : Օրուան գիրքը և ամէնէն խօսուած հրատարակու-
թիւնը : Էջ 280 : Դիմը՝ 7 զրշ. : Կեդրոնատեղ՝ Սթամբուլ , Շիրին խան ,
թիւ 7 , Օսնիկ և Բնկ. : Կը զանուի ամէն գրաւաճառի քով :

Դպրոցներու համար անհրաժեշտ

Դրասկեականներու համար կարեւոր

«Սաշօն»ներու համար գեղեցիկագոյն զարդը՝

ՀԱՅԵՐԷՆ ԵՐԿՐԱԳՈՒՆՏԸ

Հրատարակելու՝ վաւերացուած Հանր. Կրթութեան Նախարարու-
թենէն : Վարժարաններու վարիչներուն , բոլոր ընտանիքի հայրերուն
և հայ վաճառականներուն կը յանձնարարուի մէյ մէկ հաս զնել այս
կարեւոր և գեղեցիկ գարգէն : Դիմն է չրջանակով 85 , առանց չրջա-
նակի 65 զրշ. գաւառներու համար՝ իւր անտուկի և փոխադրութեան
ծախք 15 զրշ. աւելի : Դիմել՝ Պապը Ալի Ճառաէսի , թիւ 56 , Յովհ. էֆ.
Ազնաւորի «Օսմանլը» Դրատունը :

Երգ. ԳԵՂԱՐՈՒՆՍՍԱԿԱՆ ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ «ՍԻՆԿԷՐ»Ի

Բերա , Մեծ-Փողոց , Թ. 343 , Ա. Յարկ

Ամէն օր քաջ է

ՄՈՒՏԳԸ ԶՐԻ

Ա. Կարգի մրցանակ ճեշեւեալ ցուցանագէտներէն : Բարիք 1900 , Սէն-Էռի 1904 ,
Միլան 1906 , Պրուսա 1906 :

ԳՐԱՏՈՒՆ ՀԱՊԷՇԵԱՍ՝ Ա.Մ.Ա.ՍԻՍ : Ամատիայի և չրջականե-

րու զրական պէտքերուն լիովին գոհացում ապու համար է որ հիմ-
նուած է այս նոր գրատունը , ուր գիտակից խնամքով կը պատրաս-
տուին արուած բոլոր յանձնարարութիւնները : Մասնաւորապէս յանձ-
նարարելի է այս գրատունը բոլոր ուսուցիչներուն ու գրասէրներուն ,
իւր միակ կեդրոնատեղ լաւագոյն գաւազիրքերու և լաւագոյն հրա-
տարակութիւններու :

“ՄԱՍԻՍ,,Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՅԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և գաւառներու համար տարեկան 60 դրշ.:

Արտատահմանի » » 14 ֆրանք:

Թղթատարութեան ծախքը մեր վրայ:

Բաժանորդները իրաւունք ունին ստանալու մեր պարգեւները,

միշտ ձրիաբար, թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ:

Մասիսի բաժանորդագրութիւնը բացարձակապէս կանխիկ է:

Դրամ կարելի է զրկել փոխանակագիրով, օտմանեան կամ

օտար մանցա-փօսքով և օսմ. թղթատարական նամակադրոշ-

մով, 20 հաղը մէկ մէճիտի հաշիւով:

Զննատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:

Նամակ կամ որ և է գրութիւն ուղղել առ

Ե Ն Ո Վ Ք Ա Ր Մ Ե Ն

“ՄԱՍԻՍ,,Ի Հասցեով

Պապը Ա.Լի ճասէսի, Թիւ 38

درعليه باب عالی جاده سنده نومرو ۳۸ «ماسيس» غزته سی اداره خانه سی

Rédaction de la Revue «MASSIS»

N. 38, Avenue de la Sublime Porte

CONSTANTINOPLE

“ՄՍ.ՍԻՍ”ի Նոր Շրջանի Ա. Տարիի հաւաքածոն, nr 1000
էջէ բաղկացած գրական գեղեցիկ հասոր մը կը կազմէ,
կրնայ ստացուիլ Խմբագրութենէս, կանխիկ փոխա-
րժէովը՝ 60 դրշ. . կազմուած 65: Թղթատարով որկուելիք
Հասորներու համար պէտք է 5 դրշ. աւելի վճարել:

Ն Ո Վ Ք

Նոր Տարուան առաջին նորոտրիւնը

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆԻ

ԳԱՆՁ ԻՐԱԳԻՏԱԿԱՆ

Այս գիրքին համար յատկապէս փորագրուած 300 պատկերներով. —
Անմրձեկիօրէն ընտրելագոյն Դասագիրքը՝ Տարր. Դասընթացքի երկսեռ
աշակերտներու համար: Դին 5 դրշ.: Կեդրոնատեղն է հեղինակին ԳԱ-
ՐՈՒՆ Դրատունը, Կ. Պոլիս, Մեծ Նոր խան, Վերի յարկ, Թիւ 55: